

ԼՂՀ ԵՎ ՏԱՐԱԾ ԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Գազիկ Տեր-Հարությունյան

Ինչպես հայտնի է, Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների հունիսի 17-ին Ս.Պետերբուրգում տեղի ունեցած հանդիպումից անմիջապես հետո Ի.Ալիևը լքեց Պետերբուրգը, իսկ հունիսի 18-ին ԼՂՀ-ում, ադրբեջանական դիվերսիոն խմբի գործողությունների արդյունքում, հայկական կողմը կորուստներ ունեցավ: Պակաս հայտնի է, որ այդ միջադեպին հետեւեցին մեր զինված ուժերի համարժեք քայլերը: Բոլոր պարագաներում այդ իրադարձությունները սուր ընկալվեցին մեր հանրությունում եւ ակտուալացրին զանազան ռազմական սցենարների քննարկումները: Ի լրումն, հետեւեցին տարաբնույթ տեղեկատվական հոսքեր. օրինակ, որ մեծ տերությունների համաձայնությամբ ԼՂՀ-ում տեղի է ունենալու «պայմանավորված» պատերազմ, եւ կողմերին տարանջատելու են ռուսական, թուրքական ու ամերիկյան (կամ՝ ՆԱՏՕ) խաղաղապահ ուժերը. կամ, որ իսրայելական ու ամերիկյան ռմբակոծիչները Վրաստանից (!!) տեղափոխվել են Ադրբեջան եւ պատրաստվում են հարված հասցնել Իրանին, իսկ վերջինս, ի պատասխան, զորքեր է կուտակում իրանա-ադրբեջանական սահմանում: Անգամ ԱՄՆ-ում «ռուսական լրտեսների» վերաբերյալ սկանդալի ՁԼՄ-ում հայտնվելու պահը որոշ վերլուծաբաններ մեկնաբանեցին որպես միջազգային հանրության ուշադրությունը «իրանական» պատերազմից շեղելու փորձ:

Լրատվական այսօրինակ հաղորդագրումների ճնշող մասը, ինչպես քաջ հայտնի է մասնագիտական շրջանակներին, ակնհայտ ապատեղեկատվություն է: Սակայն, հաշվի առնելով այդ լայնածավալ տեղեկատվական գործողությունների աղբյուրները եւ, ինքնին, նման ապատեղեկատվության երեւան գալու փաստն ու ժամանակը, պետք է արձանագրել, որ տարածաշրջանի հանդեպ հետաքրքրությունը զգալի աճել է, եւ դա պայմանավորված չէ միայն ԼՂՀ խնդրով: Նման գործընթացը վկայում է, որ տարածաշրջանում տեղի են ունենում հերթական որակական փոփոխություններն ու վերադասավորումները: Դրանց բովանդակությունն ընկալելու համար նախ փորձենք համառոտ բնութագրել ԼՂՀ խնդրի շուրջ բանակցային գործընթացի նախկին եւ ներկա փուլերը:

Բանակցային գործընթացի փուլերը

ԼՂՀ խնդրի շուրջ միջազգային ձեւաչափերով բանակցություններն ընթանում են 90-ականների սկզբից, եւ այդ ժամանակահատվածում ռազմաքաղաքական տրամաբանությունը տարածաշրջանում, գլոբալ աշխարհաքաղաքական տեղաշարժերի ազդեցության հետեւանքով, զգալի փոփոխություններ է կրել:

Հայ-ադրբեջանական ռազմական հակամարտության առաջին փուլում միջնորդական առաքելությունը հիմնականում կատարում էին Ռուսաստանը եւ, մասամբ, Իրանը, որն ավարտվեց 1994թ. մայիսին Բիշքեկի հրադադարի մասին համաձայնագրով: Կարելի է ասել, որ այդ փուլում որոշիչ էր հետխորհրդային տարածքում ՌԴ կարելուր, սակայն աստիճանաբար նվազող դերակատարումը:

Հաջորդ փուլում միջնորդական նախաձեռնությունը պատկանում էր Մինսկի խմբին, սակայն այդ ձեւաչափում առավել ակտիվ էին ամերիկյան եւ ֆրանսիական կողմերը: Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումներն ընթանում էին Եվրոպայում եւ Միացյալ Նահանգներում (առավել հիշարժան է 2001թ. քիուեսթյան հանդիպումը): Չնայած մեծ տերությունների ավանդական ճնշումներին եւ Մինսկի խմբի համանախագահների նույնքան ավանդական դարձած լավատեսական կանխատեսումներին եւ հայտարարություններին, այդ փուլի գլխավոր հետեւանքն է հակամարտող կողմերի դիրքորոշումների հստակեցումը, ինչը նույնպես, բանակցային գործընթացի համատեքստում, բավական լուրջ արդյունք է: Հատկանշական է, որ այդ փուլը հիմնականում ենթարկվում էր միաբեւեռ աշխարհակարգի կայացման եւ հետագա հաստատման, ինչպես նաեւ՝ ԱՄՆ–ՌԴ նոր սառը պատերազմի վերսկսման տրամաբանությանը:

Ընթացիկ փուլի սկիզբը պայմանականորեն կարելի է համարել 2008թ. օգոստոսին Հարավային Օսիայի շուրջ տեղի ունեցած վրաց-ռուսական պատերազմը: Վերջինս բազմաբեւեռ համակարգի ձեւավորումով պայմանավորված աշխարհաքաղաքական տեղաշարժերի հետեւանքն է: Դրանց արդյունքում նվազել է ԱՄՆ դերակատարումը մեր տարածաշրջանում, եւ զգալի աճել է ռուսական գործոնի դերը: Կարելի է փաստել, որ այսօր Ռուսաստանը Մինսկի խմբի համանախագահների շրջանակում «ավելի հավասարի» կարգավիճակ է ձեռք բերել եւ մտադիր է էլ ավելի ամրապնդել իր դիրքերը Հարավային Կովկասում, որտեղ Հայաստանը հիմնական հենակետն է եւ միակ տարածքը, ուր կանգնած է ռուսաստանյան

զինուժը: Այդ տեսանկյունից պատահական չէ, որ ՀՀ եւ ԱՀ նախագահների հանդիպումները վերջին շրջանում ընթանում են Ռուսաստանի հովանավորության ներքո, եւ պետերբուրգյան վերջին հանդիպումը (երկարատեւ ընդմիջումից հետո) դրա վկայությունն է: Ի դեպ, հնարավոր է նաեւ, որ պետերբուրգյան համաժողովից Ալիեւի ցուցադրական հեռանալը պայմանավորված էր ոչ այնքան ՀՀ նախագահի հայտնի դիրքորոշումներով, որքան ՌԴ նախագահի նոր առաջարկներով: Նկատենք նաեւ, որ նշմարվում է ՀՀ եւ ԱՀ նախագահների հնարավոր հանդիպում Ալմաթիում, ինչը վկայում է այն մասին, որ բանակցային գործընթացը, թերեւս, շարունակվում է, եւ որ Ալիեւի դեմարշը պետք է ընդունել ընդամենը որպես դիվանագիտական հնարք, բայց ոչ սկզբունքային դիրքորոշում կամ վերջնագիր:

Միեւնույն ժամանակ, պետք է փաստել, որ տարածաշրջանում ակտիվացել է ոչ միայն Ռուսաստանը:

Տարածաշրջանային այլ դերակատարներ

Եթե Իրանի տարածաշրջանային քաղաքականությանը բնորոշ են հետեւողականությունը եւ կայունությունը, ապա նույնը չի կարելի ասել Թուրքիայի մասին: Հատկանշական է, որ ամերիկյան գերակայության տարիներին այդ երկիրը հստակ էր կատարում ԱՄՆ-ի հանդեպ «պարտականությունները», սակայն բազմաբեւեռության ձեւավորումը զգալիորեն բարձրացրեց Թուրքիայի «ինքնավարության» մակարդակը, եւ Անկարան, կտրուկ քայլեր կատարելով, սկսեց փնտրել իր տեղը նոր համակարգում: Առաջմ տպավորությունն այնպիսին է, թե թուրքերն այնքան էլ արդյունավետ չեն գործում նոր պայմաններում: Երկրում ձեւավորվել է նեոօսմանիզմից, նեոպանթուրքիզմից եւ եվրասիականությունից բաղկացած մի ագրեսիվ գաղափարախոսական սիմբիոզ, որը դրդում է Անկարային երբեմն ոչ այնքան մտածված քայլեր կատարել: Դրանց արտահայտություններից են եւ հայ-թուրքական բանակցությունների փաստացի տապալումը, եւ իր նախկին դաշնակից Իսրայելի դեմ կատարած սադրանքները: Վերջինիս առումով՝ պետք է ընդգծել, որ ԱՄՆ-ին անհանգստացնում է ոչ միայն Թուրքիա–Իսրայել հարաբերությունների վատթարացումը, այլեւ Իրանի¹, ինչպես նաեւ արաբական որոշ երկրների հետ համագործակցություն զարգացնելու Թուրքիայի փորձերը:

Թուրքական ակտիվությունն անտարբեր չի ընկալում նաեւ Ռուսաստանը: Եթե ԱՄՆ–Թուրքիա հակասությունների առկայությունն աշխարհաքաղաքական առումով նպաստավոր է Մոսկվայի համար, վերջինիս, սակայն, չի կարող հրապուրել Թուրքիայի եւ «փոքր եղբայր» Ադրբեջանի

համաձայնեցված գործունեությունն Անդրկովկասում, որը ռուսաստանյան ստրատեգներն ավանդաբար համարում են «իրենցը»: Պետք է հաշվի առնել նաև, որ չնայած Ռուսաստանը Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ էներգետիկ համաձայնություններ է կնքում եւ զարգացնում առեւտրական հարաբերությունները, բայց աշխարհաքաղաքականությունը մշտապես գերակայում է տնտեսական կատեգորիաների հանդեպ:

Հատկանշական է նաև, որ ադրբեջանական ագրեսիվությունը, ինչպես եւ թուրքականը, նույնպես գաղափարախոսության ածանցյալ է: Հայտնի է, որ Ադրբեջանը՝ որպես պետություն, բավական նոր կազմավորում է ու, իբրեւ այդպիսին, կարիք ունի ազգ ձեւավորող գաղափարախոսության: Այսօր այդ բացը լրացնում են ոչ թե քաղաքակրթական պատկերացումները եւ արժեքները (գուցե վերջիններիս բացակայության պատճառով), այլ՝ ծայրահեղ հակահայկականությունը: Սա ադրբեջանցիներից տանում է դեպի փակուղի. նրանք իրենց իսկ հորինած գաղափարախոսական դրույթներից արդեն դժվարանում են դուրս գալ, որովհետեւ հակահայկականությունը դարձել է պաշտոնական դոկտրին եւ քաղաքականություն:

Հետևություններ

Հրադադարի համաձայնագրի ստորագրումից անցել է շուրջ 16 տարի, ԼՂՀ-ում առայսօր պահպանվում է status quo-ն, եւ որոշ տեսանկյունից այդ փաստն ինքնին կարելի է համարել որոշակի ձեռքբերում: Միեւնույն ժամանակ, ներկայիս փուլը պարունակում է որոշակի ռիսկեր, որոնցից նշենք.

- ԱՄՆ հարաբերական նահանջը տարածաշրջանից եւ այդ իսկ պատճառով քաղաքական «կարգավորվածության» ընդհանուր մակարդակի նվազումը,
- Թուրքիայում ազգայնամոլական գաղափարախոսական միջավայրի ձեւավորումը եւ այդ երկրի կողմից քաղաքական «ինքնավարության» ձեռքբերումը, ինչը, մասնավորապես, արտահայտվում է Հարավային Կովկասի նկատմամբ հավակնությունների արտահայտումով,
- Ադրբեջանում ագրեսիվ հակահայկական գաղափարախոսական դաշտի կայացումը եւ Թուրքիայի հետ ռազմավարական համագործակցության զարգացումը:

Դրական գործոնների շարքում կարելի է առանձնացնել հետեւյալ կետերը.

- ԼՂՀ՝ որպես պետության կայացումը եւ, մասնավորապես, այդ իրողության ամրապնդումը միջազգային հանրության գիտակցությունում,
- հայկական քաղաքական ընտրանու կողմից դիվանագիտական փորձառության ձեռքբերումը,
- Ռուսաստանի աշխարհաքաղաքական վերականգնումը եւ այդ տերության քաղաքական ղեկավարության ձգտումը՝ լինել տարածաշրջանի գլխավոր «կարգավորիչը» (առանց թուրքիայի),
- ԱՄՆ-ի, Իսրայելի ու Եվրոպական որոշ երկրների (հատկապես՝ Գերմանիայի) հետ թուրքիայի ունեցած հակասությունների սրումը եւ արեւմտյան հանրությունում թուրքական գործոնի վերաբերյալ բացասական պատկերացումների ձեւավորումը:

Միեւնույն ժամանակ, ակնհայտ է, որ ԼՂՀ հիմնախնդրի՝ մեր պատկերացումներին համաձայն լուծումը գլխավորապես կախված է համահայկական հանրության պատրաստվածության մակարդակից: Պետք է հաշվի առնել, որ քաղաքական իրադրությունը տարածաշրջանում որոշակի փոփոխություն կարող է որակապես փոխվել: Այսպես կոչված «ինքնակազմակերպվող կրիտիկականության բնութագրիչների» վերաբերյալ քաղաքագիտական պատկերացումների համաձայն, ռազմաքաղաքական համակարգն էվոլյուցիոն եղանակով կարող է զարգանալ մինչեւ որոշակի «կրիտիկական վիճակի», որում արդեն աննշան իրադարձությունները կարող են հարուցել բուռն շրթայական ռեակցիա, ինչի արդյունքում որակապես փոխվում է ողջ համակարգը²: Նախկինում նման կրիտիկական իրավիճակ ստեղծվեց ԽՍՀՄ եւ Երկբեւեռ աշխարհակարգի փլուզման արդյունքում: Ներկայումս ընթանում է բազմաբեւեռ համակարգի ձեւավորման բավական հիվանդոտ գործընթաց, որի ընթացքում նույնպես հնարավոր է հասնել որոշակի «կրիտիկական վիճակի», որից հետո զարգացումները կընդունեն բուռն կամ, այլ խոսքերով՝ ոչ-գծային բնույթ: Նման իրավիճակին պատրաստ լինելու համար ԶԶ-ն եւ ԼՂՀ-ն պետք է լուծեն բազմաթիվ հրատապ խնդիրներ, որոնցից նշենք.

- համահայկական զարգացման իրատեսական ռազմավարության մշակումը եւ իրականացումը, քանզի հանրության ընդհանրական զարգացման մակարդակն է, որ որոշիչ է լինելու ապագայի հնարավոր հակամարտություններում,
- մեր ազգային եւ պետական շահերին ուղղված լոբբինգի ընդլայնումը եւ մրցունակության ապահովումը ԱՄՆ-ում, Եվրոպայում եւ Ռուսաստանում:

Վերոնշյալ ռազմավարական ծրագրերին զուգահեռ անհրաժեշտ է իրագործել, մասնավորապես, հետեւյալ մարտավարական գործողությունները.

- Ապահովել ԼՂՀ շուրջ բանակցային գործընթացի շարունակականությունը (իրագործել Թալեյրանի սկզբունքը՝ «միշտ պետք է բանակցել, բանակցել եւ բանակցել...»):

- Միջազգային քաղաքական հանրությունում տարանջատել ՀՀ–ի բանակցական նշանակություն ունեցող եւ առայժմ այլընտրանք չունեցող հարաբերությունները գլոբալ հարթությունում ներկայում տեղ գտած հակահրամանական միտումներից:

¹ Առայժմ տպավորությունն այնպիսին է, որ եթե պաշտոնական Թեհրանն այդ համագործակցությունը դիտարկում է որպես մարտավարական դրվագ, ապա Անկարան, ելնելով վերը նշված ծավալապաշտական գաղափարախոսական դրույթներից, դա ընկալում է որպես հեռահար ռազմավարություն:

² Նկատենք, որ ներկայացված հայեցակարգը, որն իր դատողություններում հաճախ կիրառում է ԼՂՀ խնդրին քաջատեղյակ ամերիկյան դիվանագետ Սթիվեն Մանը, փոխառված է բնական գիտություններից, մասնավորապես Նոբելյան մրցանակակիր Ն.Սենյոնովի ճյուղավորված շղթայական ռեակցիաների տեսությունից:

ՊՈԼՍՈ ՅԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ Ռուբեն Մելքոնյան

Վերջին մի քանի ամիսներին Թուրքիայի հայ համայնքի ամենաօրակարգային հարցը Պոլսո պատրիարքությունում սպասվող ընտրություններն են: Խնդիրն այն է, որ Պոլսո ներկայիս պատրիարք Մեսրոպ Մութաֆյանի մոտ հայտնաբերվել է հիշողության հետ կապված անբուժելի հիվանդություն, որը, փաստորեն, անգործունյա է դարձրել նրան: Ներեկեղեցական կանոնների համաձայն, ընտրված պատրիարքը, անկախ տարբեր հանգամանքներից, ցմահ կրում է այդ տիտղոսը, իսկ հիվանդության դեպքում ընտրվում է աթոռակից պատրիարք, որն ունենում է հավասարազոր իրավասություններ: Մութաֆյան պատրիարքի առողջական խնդիրները լուրջ ազդեցություն են ունենում նաև համայնքային կյանքի տարբեր ոլորտների վրա, քանի որ շարունակելով օսմանյան ավանդույթները՝ թուրքական իշխանություններն այսօր էլ հայ համայնքի ղեկավար են ճանաչում պատրիարքին, որի փաստացի բացակայությունը ստեղծում է անկազմակերպ վիճակ:

Հիշեցնենք, որ Պոլսո Հայոց պատրիարքությունը հիմնադրվել է 1461թ., երբ Կոստանդնուպոլսի գրավումից հետո սուլթան Մեհմեթ Բ-ն Բուրսայից հրավիրում է տեղի առաջնորդ Յովակիմ եպիսկոպոսին, որն էլ դառնում է նորաստեղծ պատրիարքության առաջնորդը: Սակայն միայն 1543 թվականին Աստվածատուր Ա-ից սկսած է կիրառվում Հայոց պատրիարք տիտղոսը: Մինչև օրս Պոլսո Հայոց պատրիարքությունն ունեցել է 84 գահակալ:

Օսմանյան շրջանի վերջին Հայոց պատրիարքը՝ Ջավեն Տերեղիայանը, որը բավական ակտիվ գործունեություն է վարել հատկապես 1918-1922թթ., քեմալական իշխանությունների պարտադրանքով ստիպված է եղել լքել Թուրքիան 1922-ին: Դրանից հետո մինչև 1927թ. Պոլսո Հայոց պատրիարքի գահը թափուր է մնացել, եւ 1923–1927թթ. այն վարել է տեղապահ ընտրված Գեւորգ եպիսկոպոս Ասլանյանը:

Թուրքիայի Հանրապետությունում առաջին անգամ Հայոց պատրիարքի ընտրություններ տեղի են ունեցել 1927թ., եւ պատրիարք է ընտրվել Մեսրոպ Նարոյանը (1927–1944թթ.): Նրա մահից հետո պատրիարքական գահը կրկին թափուր է մնում, եւ Գեւորգ եպիսկոպոս Ասլանյանը երկրորդ

անգամ է դառնում տեղապահ (1944–1950թթ.): Եվ միայն 1950 թվականի վերջին անց են կացվում պատրիարքի ընտրություններ. ընտրվում է Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանը, որն այդ ժամանակ Լատինական Ամերիկայի Չայոց հոգեւոր առաջնորդն էր: 1951թ. վերադառնալով Թուրքիա՝ նա ստանձնում է պատրիարքի պարտականությունները: 1961թ. Գարեգին Խաչատուրյանի մահից հետո պատրիարք է ընտրվում Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, որն այդ աթոռի ամենաերկարակյաց գահակալներից էր (1961–1990թթ.): Նրա ջանքերով համայնքային կյանքում նկատվում է աշխուժություն, աշխատանքներ են տարվում գավառահայրության վիճակի բարելավման համար: 1990թ. Շնորհք պատրիարքի մահից հետո Պոլսո Չայոց 83-րդ պատրիարք է ընտրվում Գարեգին արքեպիսկոպոս Քազանջյանը (1990–1998թթ.), իսկ վերջինիս մահից հետո՝ 1998թ. պատրիարք է ընտրվում Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը:

Պոլսո պատրիարքության հիմնադրումից հետո, արդեն 17-րդ դարի սկզբին, նրան էին պատկանում Օսմանյան կայսրության տարածքում գոյություն ունեցող բոլոր առաքելական եկեղեցիները: 1900-ական թվականների սկզբին պատրիարքությունն ունեցել է 1181 եկեղեցի եւ 132 վանք: Այսօր Պոլսո պատրիարքության իրավասության տակ են գտնվում ընդհանուր առմամբ 43 եկեղեցի, որոնցից 42-ը՝ Թուրքիայում, իսկ մեկը՝ Կրետե կղզում: Թուրքիայի 42 հայկական եկեղեցիներից 6-ը գտնվում են Ստամբուլից դուրս՝ Կեսարիայում, Դիարբեքիրում, Դերիքում, Իսկենդերունում, Քըրըքհանում եւ Վաքըֆլը գյուղում: Պատրիարքության ուղղակի կամ անուղղակի տնօրինության տակ են նաեւ բազմաթիվ այլ հաստատություններ:

Գաղտնիք չէ, որ այսօր պոլսահայ համայնքը կանգնել է մի շարք լուրջ խնդիրների առջեւ, եւ պատրիարքի փաստացի բացակայության պայմաններում այդ խնդիրները չեն ստանում լուծումներ ու էլ ավելի են սրվում: Մութաֆյան պատրիարքի անգործունյա վիճակը ստիպեց պատրիարքությանն ու համայնքին ելքի ուղիներ փնտրել ստեղծված վիճակից: Հիմք ընդունելով Չայ Առաքելական եկեղեցու ներքին կանոնադրական որոշակի նորմեր՝ որոշում կայացվեց անցկացնել աթոռակից պատրիարքի ընտրություններ:

Ըստ թուրքական օրենքների, պատրիարքի ընտրության թույլտվություն է տալիս Ստամբուլի նահանգապետարանը, որն էլ իր հերթին դա ստանում է ներքին գործերի նախարարությունից: Մի քանի ամիս առաջ Չայոց պատրիարքության անունից դիմում էր ներկայացվել Ստամբուլի նահանգապետարան՝ խնդրանքով, որ թույլ տան աթոռակից պատրիարքի ընտրություններ անցկացնել, իսկ որոշ ժամանակ անց համայնքի անդամ-

ներից ձեւավորված Նախաձեռնող խումբը, իր հերթին, դիմել էր նահանգապետարան՝ խնդրելով պատրիարք ընտրելու թույլտվություն: Այսինքն՝ հայ համայնքի կողմից երկու տարբեր դիմումներ են ներկայացվել, որտեղ կար մի կարելու իրավական տարբերություն՝ ընտրել պատրիարք, թե՞ աթոռակից պատրիարք: Այս հարցը որոշակի խնդիրներ ի հայտ բերեց համայնքում եւ, արդեն առկա տարածայնություններն էլ ավելի խորացան, իսկ թուրքական իշխանություններն այս իրավական անորոշությունը պատրվակ համարելով՝ ամիսներ շարունակ անպատասխան թողեցին երկու դիմումն էլ:

Սկսված գործընթացը ենթադրում էր նաեւ թեկնածուների առաջադրում: Ըստ Հայ եկեղեցական ու Թուրքիայի օրենքների, Հայ Առաքելական եկեղեցու միայն ութ բարձրաստիճան հոգեւորական իրավունք ունեին հավակնելու պատրիարքի աթոռին, որոնցից հինգը հենց սկզբից հրաժարվեցին մասնակցել ընտրություններին: Մնացած երեքը՝ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը, Գերմանիայի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը եւ Պուլսի պատրիարքության Գերագույն հոգեւոր խորհրդի նախագահ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը, հայտարարեցին, որ մասնակցելու են ընտրություններին:

Ի սկզբանե ակնհայտ էր, որ թուրքական իշխանություններն անպայման միջամտելու են այս խնդրին եւ փորձելու են պատրիարքի գահին տեսնել իրենց նախընտրած թեկնածուին, որը, շատերի կարծիքով, Թուրքիայի քաղաքացի Արամ արքեպիսկոպոս Աթեշյանն էր: Սակայն սկսված քարոզարշավը հետաքրքիր ընթացք ունեցավ, եւ թեկնածուների այցերն ու հանդիպումները համայնքի հետ էապես փոխեցին թուրքական իշխանությունների նախատեսած սցենարը:

Գարեգին եւ Սեպուհ Սրբազաններն այցելեցին Ստամբուլ եւ համայնքի հետ հետաքրքիր ու բազմամարդ հանդիպումներ ունեցան: Հատկապես տպավորիչ հանդիպումներ ունեցավ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ Սրբազանը. արդյունքում՝ համայնքում լուրջ ոգեւորություն առաջացավ, եւ կարելի է ասել, որ հենց հայաստանցի թեկնածուն էլ դարձավ ընտրությունների հավանական ֆավորիտը:

Հարկ է նկատել, որ համայնքային խնդիրները խորանում են նաեւ առկա լճացած պայմանների հետեւանքով, եւ ձեւավորված ստատուս քվոյի պահպանումը կարող է կործանարար լինել: Թուրքական իշխանություններին, իհարկե, ձեռնտու չեն ակտիվ հովվապետի ընտրությունն ու հայ համայնքի առողջացումը, ուստի կանխատեսելի էր, որ նրանք ամեն ինչ անելու էին ճահճացած իրավիճակի պահպանման համար:

Համայնքում աթոռակից պատրիարքի ընտրության հետ կապված

սպասողական վիճակն արդեն մի քանի ամիս շարունակվում էր, եւ միայն հունիսի 29-ին Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը Ստամբուլի նահանգապետարանի միջոցով, ի վերջո, պատասխանեց հայ համայնքի դիմումներին, որտեղ նշվում է, որ իշխանությունները նպատակահարմար չեն գտնում ո՛չ պատրիարքի, ո՛չ էլ աթոռակից պատրիարքի ընտրությունները, այլ թույլտվություն են տալիս պատրիարքի տեղապահ ընտրելու համար: Նկատենք, որ արդեն իսկ կար պատրիարքի տեղապահ՝ ի դեմս Պոլսո աթոռի ամենատարեց հոգեւորական Շահան արքեպիսկոպոս Սվաջյանի, որը հիշյալ պատասխանից հետո, անմիջապես, հրաժարական տվեց, եւ մի քանի ժամ անց պատրիարքության հոգեւոր խորհուրդը հապշտապ պատրիարքի տեղապահ ընտրեց Արամ արքեպիսկոպոս Աթեշյանին:

Այս ամբողջ գործընթացն ապացուցում է, որ թուրքական իշխանությունները մեծապես հետաքրքրված էին եւ ուղղակի միջամտեցին հարցին: Մյուս կողմից, նրանց քայլերի տրամաբանությունը հուշում է, որ տեղապահ ընտրելու թույլտվության որոշմանը նրանք գնացել են այն բանից հետո, երբ հասկացել են, որ առկա ռեսուրսները բավարար չեն համահամայնքային ընտրություններում իրենց նախընտրելի թեկնածուի հաղթանակի համար:

Այս ամենը բավական բացասական ազդեցություն կունենա Թուրքիայի հայության վրա, եւ կխորանա համայնքի լճացած ու անորոշ վիճակը: Այն ոգեւորությունը, որ նկատվում էր համայնքում քարոզարշավի ժամանակ, անմիջապես տեղը զիջեց հուսախաբությանն ու անորոշությանը: Բացի այդ, ներհամայնքային երկպառակությունները եւ խմբավորումների միջեւ պայքարն էլ ավելի կսրվեն: Կարելի է ասել նաեւ, որ Հայոց պատրիարքի ընտրությունը, անպայմանորեն, կապվում է հայ-թուրքական հարաբերությունների հետ, եւ թուրքական կողմն այն համարում է իր խաղաքարտերից մեկը, որը հարմար պահի կարող է դրվել շրջանառության մեջ:

Ավելորդ չէ հիշեցնել, որ նմանատիպ վիճակ, երբ արգելվել է ընտրել Հայոց պատրիարք, Թուրքիայում ստեղծվել է երկու անգամ. առաջինը, երբ իշխանության եկան քեմալականներն ու ծավալվեց քեմալական ազգայնականությունը եւ երկրորդը՝ 1940-ական թվականներին, երբ երկրում վերելք էին ապրում ազգայնամոլությունն ու պանթուրքիզմը: Երկու դեպքում էլ համայնքում արձանագրվեցին հետընթաց, խնդիրների սրում ու երկպառակության խորացում:

ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Վահրամ Հովյան

Պատմական ակնարկ

Հաշվի առնելով այն, որ, համաձայն որոշ տեսակետների, բողոքականությունը միջնադարյան Հայաստանում տարածում գտած պավլիկյան եւ թոնդրակյան շարժումների ժառանգորդն է, իսկ այս շարժումների հետեւորդները 8-9-րդ դարերում զանգվածաբար բռնագաղթեցին Բուլղարիա, կարելի է ասել, որ հայ բողոքականները Բուլղարիայում հաստատվել են միջնադարում: Պավլիկյանների ուսմունքը մեծ ազդեցություն ունեցավ Բուլղարիայում Բոգոմիլյան աղանդի առաջացման վրա, որն էլ հետագայում իր ազդեցությունը թողեց բողոքականության վրա:

Բուլղարիա արտագաղթած պավլիկյանականներն ու թոնդրակյանները հիմնեցին ծաղկուն համայնքներ, որոնցից շատերի անվանումները՝ Պավլիկենի, Գոռնո Պավլիկենի, Դոլնո Պավլիկենի, Թորոս, Կալինիկ, Արմենոխոր, Արմենիցա, Էրմենլի, Էրմենսկա եւ այլն, պահպանվել են երկար ժամանակ, նույնիսկ մինչեւ մեր օրերը:

19-րդ դարում Օսմանյան կայսրությունում, որի կազմի մեջ էր մտնում նաեւ Բուլղարիան, լայն թափով սկսեց ծավալվել բողոքական միսիոներների գործունեությունը, որը հանգեցրեց բողոքական համայնքների ձեւավորմանը: Բուլղարիայում բողոքական համայնք ձեւավորվել է 1857թ.: Ինչ վերաբերում է հայերին, ապա 1846թ. Կ.Պոլսում ձեւավորված հայ ավետարանականների առաջին համայնքը, աստիճանաբար ստվարանալով, տարածվեց նաեւ Օսմանյան կայսրության այլ շրջաններում, այդ թվում նաեւ Բուլղարիայում բնակվող հայերի վրա: Բուլղարիայում հայ ավետարանական համայնքի ստվարացմանը նպաստել է Օսմանյան կայսրության այլ բնակավայրերից հայերի (այդ թվում նաեւ ավետարանականների) դեպի Բուլղարիա գաղթի շարունակական միտումը:

1877–1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հետեւանքով Բուլղարիայի ազատագրումը օսմանյան տիրապետությունից ավելի բարենպաստ պայմաններ ստեղծեց դեպի այդ երկիր հայերի գաղթի համար: Հայ գաղթականների մեծ խմբեր հայտնվեցին Բուլղարիայում 1904–1906թթ. հայկական կոտորածների, Առաջին աշխարհամարտի ժամանակ իրագործված Հայոց ցեղասպանության եւ 1919–1922թթ. հույն-թուրքական պատերազմի հետեւանքով: Արդյունքում՝ Բուլղարիայում հայերի

ընդհանուր քվաքանակի հետ միասին մեծացավ նաև հայ ավետարանականներին թիվը:

1944թ. Բուլղարիայում կոմունիստական վարչակարգի հաստատումը ծանր անդրադարձավ նաև հայ ավետարանական համայնքի վրա: Պետական մակարդակով վարվող աթեիզմի քաղաքականությունը, արտագաղթը, բուլղարական իշխանությունների ծուլման քաղաքականությունը ծանր հետեւանքներ ունեցան նաև Հայ Ավետարանական եկեղեցու՝ որպես հոգեւոր կառույցի վրա: Խորհրդային համակարգի փլուզմամբ վերջ դրվեց պետության կողմից վարվող ճնշումների քաղաքականությանը, սակայն անցյալից ժառանգված որոշ խնդիրներ դեռևս պահպանվում են:

Կազմակերպական կառույցները

Ներկայումս Բուլղարիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպական կառույցները 8-ն են, ինչը բավական պատկառելի ցուցանիշ է՝ հաշվի առնելով հայ ավետարանականների փոքր տեսակարար կշիռն ինչպես բուլղարական, այնպես էլ բուլղարահայ հասարակության շրջանակներում:

Բուլղարիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպական կառույցները սփռված են երկրի հայաշատ վայրերում: Համաձայն այդ երկրի Ազգային վիճակագրական ինստիտուտի տվյալների (2001թ.)՝ տեղի հայաշատ առաջին 6 բնակավայրերն են Պլովդիվը (3140 հայ), Վառնան (2240), մայրաքաղաք Սոֆիան (1672), Բուրգասը (904), Ռուսեն (886) եւ Շումենը (357): Հայ ավետարանական համայնքի կազմակերպական կառույցները գտնվում են հենց այս բնակավայրերում՝ Վառնայում եւ Սոֆիայում (2-ական), ինչպես նաև Պլովդիվում, Բուրգասում, Ռուսեում եւ Շումենում (1-ական): Ելնելով կազմակերպական կառույցների սփռվածության այսպիսի պատկերից՝ կարելի է ենթադրել, որ հայ ավետարանականները Բուլղարիայում կենտրոնացված են Վառնայում, Սոֆիայում, Պլովդիվում, Բուրգասում, Ռուսեում եւ Շումենում:

Ի տարբերություն Մերձավոր Արեւելքի հայ ավետարանական համայնքների՝ Բուլղարիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպական կառույցներն աչքի չեն ընկնում տեսակային բազմազանությամբ: Դրանք բաժանվում են երկու խմբի.

- *Եկեղեցիներ*, որոնց թիվը հինգն է: Գտնվում են Վառնայում, Պլովդիվում, Սոֆիայում, Բուրգասում եւ Ռուսեում (մեկական):
- *Ավետարանական եղբայրություններ*, որոնց թիվը երեքն է: Գտնվում են Վառնայում, Սոֆիայում եւ Շումենում (մեկական):

Այսպիսով, Բուլղարիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպական ութ կառույցներից հինգը եկեղեցիներ են, իսկ երեքը՝ ավետարանական եղբայրություններ: Վառնան եւ Սոֆիան Բուլղարիայի հայ ավետարանական համայնքների մեջ առանձնանում են նրանով, որ ունեն են եկեղեցի, եւ ավետարանական եղբայրություն: Մյուս համայնքներից Պլովդիվում, Բուրգասում եւ Ռուսեում գործում են միայն եկեղեցիներ, իսկ Շումենում՝ ավետարանական եղբայրություն: Վառնայի Հայ Ավետարանական եկեղեցին եւ եղբայրությունը գլխավորում է նույն անձը՝ եղբայր Ներսես Կետիկյանը:

Տեսակային բազմազանության առումով Բուլղարիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպական կառույցների աղքատությունը՝ կրթական, սոցիալական եւ այլ տեսակի կառույցների բացակայությունը, կարելի է բացատրել հետեւյալ պատճառներով.

1. *Եվրոպայում հոգեւոր եւ աշխարհիկ ոլորտների միջեւ հստակ տարանջատվածությունը:* Ի տարբերություն Մերձավոր Արեւելքի հայ ավետարանական համայնքների, որոնցում կրթական, սոցիալական եւ այլ ոլորտները նույնպես գտնվում են կրոնական համայնքների իրավասության ներքո, Եվրոպայում դրանք գտնվում են աշխարհիկ ոլորտում՝ տնօրինվելով աշխարհիկ իշխանությունների կամ համայնքային կառույցների կողմից:

2. *Կոմունիստական անցյալի ժառանգությունը:* Կոմունիստական շրջանի աթեիստական քաղաքականության մթնոլորտում սահմանափակվում էին կրոնական իշխանությունների գործունեության ոլորտները, եկեղեցին ենթարկվում էր հալածանքների: Հնարավոր է, որ Հայ Ավետարանական եկեղեցին դեռեւս լիովին չի վերականգնվել կոմունիստական անցյալի հալածանքներից ու սահմանափակումներից:

3. *Բուլղարիայի Ուղղափառ եկեղեցու արտոնյալ դիրքը մյուս եկեղեցիների համեմատ:* Կրոնի ոլորտում վարվող պետական քաղաքականության արդյունքում Բուլղարիայում գործող այլ եկեղեցիները չունեն այն արտոնությունները, ինչ Բուլղար Ուղղափառ եկեղեցին:

Միջդավանական հարաբերությունները

Բուլղարիայի հայ ավետարանական համայնքը տեղի Հայության մի մասն է: Դրա վկայություններն են.

- *Հայ ավետարանականների բնակությունը Բուլղարիայի հայաշատ վայրերում:* Բուլղարիայի հայաշատ բնակավայրերում՝ Պլովդիվում, Վառնայում, Սոֆիայում եւ այլն, հայ առաքելականներն ու ավետարանականները միմյանց հետ ապրում եւ գործում են կողք կողքի: Հայ

Առաքելական եկեղեցիների կողքին գործում են նաև Հայ Ավետարանական եկեղեցիները:

- *Համազգային եւ համայնքային կառույցներում տարբեր հարանվանությունների ներկայացուցիչների ընդգրկվածությունը:* Քանի որ համազգային կառույցների (ՀԲԸՄ, ՀՄԸՄ, ՀՕՄ եւ այլն) Բուլղարիայի մասնաճյուղերը, ինչպես նաև տեղական համայնքային կառույցները՝ վարժարաններ, մշակութային, երիտասարդական միություններ եւ այլն, ունեն աշխարհիկ բնույթ, ապա լիովին կարելի է ենթադրել, որ այդ կառույցների գործունեության մեջ ընդգրկված են հայերը՝ անկախ դավանանքային պատկանելությունից: Թեկուզ տեսականորեն կարելի է պնդել, որ դավանանքային տարբերությունները պետք է որ դեր չխաղան այդ կառույցների գործունեության մեջ ընդգրկվող հայերի համար:

Ներկայումս չկա հակասությունների այնպիսի պատճառ, որը կհանգեցնի հայ առաքելականների եւ ավետարանականների առճակատման: Առաքելական-ավետարանական տարբերակումների մթազմանը մեծապես նպաստել է կոմունիստական շրջանի աթեիստական մթնոլորտը, ինչպես նաև ներկայումս Եվրոպայում տիրող աշխարհիկությունը, որոնք ջնջել են հոգեբանական անջրպետները Հայության տարբեր դավանանքային շերտերի միջև:

Իսկ Բուլղարիայի Հայության ազգային համախմբման հիմքում (չնայած դավանանքային տարբերություններին) ընկած են հետեւյալ գործոնները.

- *Ազգային ինքնագիտակցությունը կամ հայ լինելու զգացումը:* Չնայած իրենց դավանանքային յուրահատկությանը՝ հայ ավետարանականներն ամենուրեք եւ մշտապես ունեցել են ազգային բարձր գիտակցություն եւ իրենց համարել Հայության անբաժան մասը:

- *Առկա մարտահրավերներին (ուժացում, արտագաղթ եւ այլն) դիմագրավելու համար հայ համայնքի սակավ ռեսուրսների համախմբման անհրաժեշտությունը:* Ըստ բուլղարահայության ներկայացուցիչների՝ հայ համայնքն այնքան փոքր է, որ չի կարող թույլ տալ իր ներուժի ջլատման շրայլությունը: Ընդհակառակը՝ պետք է համախմբել առանց այն էլ սակավ ռեսուրսները:

ՆՈՐ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ *Արաքս Փաշայան*

Միջին Արեւելքի արաբական մի շարք երկրներում ապրում են զգալի թվով հայեր, որոնց հանդեպ արաբական աշխարհում ավանդականորեն ձեւավորվել է դրական վերաբերմունք: Առավել ստվար են Լիբանանի, Սիրիայի, Եգիպտոսի եւ Հորդանանի հայ համայնքները, որտեղ ապրող հայերը համարվում են այդ երկրների լիարժեք քաղաքացիներ եւ զգալի ներդրում ունեն տնտեսական եւ մշակութային, Լիբանանի պարագայում՝ նաեւ քաղաքական կյանքում:

Ինչպես ողջ սփյուռքահայության, այնպես էլ Միջին Արեւելքի հայերի առաջ ծառայած են խնդիրներ, որոնք կապված են գլոբալացման, հայապահպանության, արտագաղթի, տարածաշրջանում առկա քաղաքական եւ սոցիալական հիմնահարցերի հետ:

Աստիճանաբար տարածաշրջանի հայության համար ուրվագծվում են նոր մարտահրավերներ, որոնք առնչվում են Միջին Արեւելքում Թուրքիայի հարածուն ակտիվացմանը, արաբա-թուրքական հարաբերությունների ջերմացմանը: Ահա այդ համատեքստում հայ համայնքների կողմից շատ գործողություններ դիտարկվում են իբրեւ հակաթուրքական եւ որպես այդպիսին՝ տեղական իշխանությունների կողմից կասեցվում են: Այս պարագայում խոսքը, ըստ էության, հայերի ազգային գործունեության սահմանափակման մասին է:

Արաբական վարչակարգերի միջոցով Միջին Արեւելքի հայ համայնքների վրա արդեն որոշակի ճնշումներ ի հայտ եկան 2002-ից ի վեր, երբ իշխանության եկած Արդարություն եւ զարգացում կուսակցությունը շրջադարձ կատարեց երկրի արտաքին քաղաքականության մեջ՝ մեծ տեղ տալով միջինարեւելյան կամ իսլամական ուղղությամբ: Արաբական առաջին երկրներից մեկը, որի հետ Թուրքիան կարգավորեց իր խրթին հարաբերությունները, Սիրիան էր: Թուրք-սիրիական հարաբերությունների ջերմացումն անհետեւանք չմնաց. Սիրիայում սկսեցին արգելել Հայոց ցեղասպանության վերաբերյալ գրքերի տպագրությունն ու վաճառքը:

Բնականաբար, արաբական պետությունները, այդ թվում՝ Սիրիան, պետք է առաջնորդվեն սեփական ազգային շահերով՝ ձգտելով խուսափել Թուրքիայի հնարավոր բացասական արձագանքից: Իսկ դա նշանակում է

կանխել թուրքիայի ազգային շահերի դեմ ուղղված ցանկացած, առավել եւս՝ հրապարակային գործողություն:

Ըստ լիբանանյան «Զարթոնք» օրաթերթի՝ վերջերս լիբանանյան հեռուստաալիքներից մեկի անձնակազմին սահմանապահները չեն արտոնել մուտք գործել Սիրիա՝ Դեյր Ջորում նկարահանումներ կատարելու համար, հակառակ այն հանգամանքին, որ Սիրիայի իշխանություններից նախօրոք անհրաժեշտ թույլտվություն էին ստացել: Այդ միջադեպը տեղի է ունեցել ամերիկյան CBS հեռուստաալիքի կողմից Հայոց ցեղասպանության մասին պատմող վաթսուն րոպե տեւողությամբ հաղորդման հեռարձակումից որոշ ժամանակ անց: Հաղորդման մեջ ցուցադրվել են Դեյր Ջորի անապատը, Հայոց ցեղասպանության զոհերի մասունքները: Նշված հեռուստահաղորդման կապակցությամբ թուրքական իշխանությունները բողոք են ներկայացրել սիրիական կառավարությանը՝ իրենց երկրում CBS-ի կողմից հակաթուրքական ֆիլմ նկարահանելու թույլտվության համար: Իսկ 2010-ի ապրիլին Հայաստանի նախագահի՝ Դեյր Ջոր կատարած այցելությունը սիրիական զանգվածային լրատվամիջոցները գրեթե չեն լուսաբանել:

Հատկանշական է, որ Սիջին Արեւելքի պետությունների արտաքին քաղաքական գծի փոփոխությունը կարող է խարխուլել էթնոդավանական փոքրամասնությունների՝ առանց այդ էլ փխրուն դիրքերը: Ասվածի ապացույցն են վերջին տարիներին Իրաքում իսլամ արմատականների կողմից իբրեւ Արեւմուտքի դաշնակիցներ դիտարկվող հայերի եւ քրիստոնյա այլ փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող բռնությունները: Նույն Սիրիայում թուրք-սիրիական հարաբերությունների ջերմացումը բացասաբար է անդրադառնում նաեւ քրդերի վրա, որոնց նկատմամբ վերջին շրջանում իրականացվում են տարաբնույթ ճնշումներ:

Սիջին Արեւելքում հայերի նկատմամբ սահմանափակումներ իրականացնելու մեկ այլ դեպք կապված է Հորդանանի իշխանությունների հետ: Վերջիններս չթույլատրեցին, որպեսզի Ամմանում հունիսի 3-6-ը կայանար Հայ բարեգործական ընդհանուր միության Սիջին Արեւելքի երիտասարդ մասնագետների առաջին համագումարը, որին պետք է մասնակցեին շուրջ 150 հայ երիտասարդներ: Ըստ հայկական աղբյուրների՝ կազմակերպիչներն այդ մասին տեղեկացվել են համագումարի հրավիրման միայն նախորդ գիշերը, երբ մասնակիցներն այլեւս ժամանել էին Ամման: Համագումարին նախատեսվում էին զեկուցումներ Հայության խնդիրների վերաբերյալ, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության թեմայով: Համագումարի չեղյալ հայտարարվելու կապակցությամբ ՀԲԸՄ-ը պաշտոնական որեւէ

բացատրությունն չի տվել՝ ըստ ամենայնի չցանկանալով խնդիրներ ստեղծել Հորդանանի հայերի համար:

Այլևս ակնհայտ է, որ նշված դեպքը նույնպես կապ ունի հորդանանաթուրքական հարաբերությունների ջերմացման, իսկ առավել ստույգ՝ հունիսի 10-ին Հորդանանի, Լիբանանի, Սիրիայի եւ Թուրքիայի միջեւ ազատ առևտրային գոտու ստեղծման եւ վիզային ընթացակարգը վերացնելու մասին ստորագրված համաձայնագրի հետ:

Մեկ այլ միջադեպ կապված է լիբանանյան իրականության, ավելի ստույգ՝ Ցեղասպանությանը վերաբերող «Ձարթի՛ր, որդեակ» երաժշտական տեսահոլովակի ցուցադրման հետ: Այլին Խաչատրյանի կողմից կատարվող երգի մեջ չնայած Թուրքիայի մասին որեւէ հիշատակում չկա, սակայն Լիբանանի իշխանությունները, մտահոգված լինելով, որ այն կարող է բացասաբար ազդել լիբանանա-թուրքական աշխուժացող հարաբերությունների վրա, արգելել են դրա ցուցադրումը: Տեսահոլովակը ցուցադրվել է միայն Ապրիլի 24-ին:

Միջին Արեւելքում Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերման եւ հայ համայնքների վրա դրա բացասական ազդեցության հարցը վերջին շրջանում քննարկման առարկա է դարձել սփյուռքահայ առանձին շրջանակներում, այդ թվում՝ մամուլում: Հնչող տեսակետների համաձայն՝ արաբական երկրներում ապրող հայերը պետք է ակտիվ աշխատանք տանեն՝ հակազդելու սահմանափակումներին, ինչպես նաեւ ի ցույց դնելու, որ Իսրայելի հետ հարաբերությունների վատթարացումը, Թուրքիայի կողմից պաղեստինյան խնդրին ցուցաբերվող աջակցությունը չի կարող անկեղծ լինել: Ըստ այդմ՝ Էրդողանը, օգտվելով քաղաքական այն վակուումից, որ ստեղծվել էր պաղեստինյան խնդրի հարցում արաբ ղեկավարների անգործությունից, կարողացավ Միջին Արեւելքում բարձրացնել թե՛ իր կուսակցության, թե՛ պետության վարկանիշը:

Սփյուռքահայ գործիչներից շատերը համոզված են, որ ապագայում հայերին առնչվող շատուշատ իրողություններ կախված կլինեն Թուրքիայի հետագա վարքագծից: Ի վերջո, արաբական աշխարհն անհամբերությամբ սպասում է, թե Թուրքիան երբ կվերանայի եւ արդյոք կվերանայի ռազմական համագործակցության պայմանագրերն Իսրայելի հետ:

Այսպիսով, Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ առաջնահերթություն ձեռք բերած իսլամական ուղղությունը շահեկան չէ ինչպես Հայաստանի, այնպես էլ Միջին Արեւելքի հայ համայնքների տեսանկյունից: Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում նախապայմաններ առաջադրելուց եւ միջազգային մակարդակներում Հայաստանի դիրքերը թուլացնելու փորձերից հետո Թուրքիան ջանքեր է գոր-

ծաղրում՝ թուլացնելու նաեւ Միջին Արեւելքի հայկական սփյուռքը, որի օրակարգը խնդիրներ է ստեղծում Անկարայի համար: Եթե ԱՄՆ-ում կան Արեւմուտքում հայկական քարոզչության դեմ Անկարան օգտագործում էր սեփական, նաեւ՝ հրեական եւ ադրբեջանական լոբբիները, ապա Միջին Արեւելքի հայերի նկատմամբ Թուրքիան լծակներ է ձեռք բերում արաբական վարչակարգերի միջոցով: Վերջիններս հայ համայնքների առանձին գործողություններ փորձում են չեզոքացնել կան թուրքական ճնշմամբ, կան Թուրքիային «չնեղացնելու» նկատառումով:

Մյուս կողմից, նման սահմանափակումները, ընդհանուր առմամբ, չեն վնասում արաբական միջավայրում հայերի գործունեությանը եւ նրանց նկատմամբ առկա ջերմ վերաբերմունքին: Նույն Հորդանանում իշխանությունները վերջին շրջանում հայերին քրիստոնյա այլ համայնքների կողքին հողակտոր են հատկացրել Հորդանան գետի ափին՝ Հիսուս Քրիստոսի մկրտության վայրում եկեղեցի կառուցելու համար:

Միջին Արեւելքի հայ համայնքների շուրջ ստեղծվող նոր իրավիճակը որքան էլ մտահոգիչ է, սակայն կարող է լրացուցիչ ազդակ դառնալ՝ առավել համախմբվելու համար:

ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՍՐԱՅՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Հայկ Գաբրիելյան

Ներկայումս Թուրքիան ապրում է ահաբեկչական գործողություններով լի մի շրջան, երբ հիմնականում դրսեւորվում են քուրդ ապստամբները:

2010 թվականի մայիսի 31-ի գիշերը թուրքական «Մավի Մարմարա» նավի վրա խրայելական հատուկ ջոկատայինների հարձակումից ժամեր առաջ PKK զինյալները հարձակում գործեցին Իսքենդերունի ռազմածովային բազայի վրա, ինչի արդյունքում զոհվեց 7 թուրք զինծառայող: Ի պատասխան՝ թուրքական ռմբակոծիչներն ավիահարվածներ հասցրին Հյուսիսային Իրաքում գտնվող քուրդ ապստամբների ճամբարներին:

2010 թվականի հունիսի 14-ին PKK զինյալները Թունջելի-Էրզինջան ավտոմայրուղում երկու ժամ կանգնեցրել են անցնող ավտոմեքենաները, իջեցրել ուղեւորներին, ստիպել, որ վերջիններս հիշատակի համար նկարվեն «Կեցցե՛՜ ժողովրդավարական ինքնավար Քուրդիստանը» կարգախոսի ներքո: Հունիսի 19-ին 250 քուրդ զինյալ միաժամանակ երեք տեղից հարձակվել են Իրաքին սահմանակից Հաքքարի նահանգի Շենդինլի շրջանի թուրքական զորամասի վրա, ինչի արդյունքում զոհվել է 9 եւ վիրավորվել 14 թուրք զինծառայող: Ապա նույն վայրում, հայտնվելով ականապատ տարածքում, պայթյունից զոհվել է եւս 2 թուրք զինծառայող: Հունիսի 19-ի գիշերը քուրդ զինյալներն Էլազըղ նահանգում հարձակում են գործել թուրքական զինվորական անցակետի վրա եւ սպանել 1 թուրք զինծառայողի: Հունիսի 24-ին նույն շրջանի ջրամբարի պահպանության ժամանակ թուրք զինծառայողները հայտնվել են քուրդ զինյալների կրակահերթի տակ, ինչի ընթացքում զոհվել է 2 թուրք զինծառայող:

Հունիսի 21-ին պայթյուն տեղի ունեցավ Ստամբուլում, ինչի արդյունքում զոհվեց 4 թուրք զինծառայող, վիրավորվեց 12 մարդ: Դրանից անմիջապես հետո Ստամբուլի նահանգապետ Հյուսեին Ավնի Մութլուն հայտարարեց, որ դա ահաբեկչական գործողություն է: Ստամբուլի մարդաշատ Հալքալը շրջանում տեղադրված պայթուցիկ սարքը գործել է այն ժամանակ, երբ նրա մոտով անցնելիս է եղել զինվորականներով լի ավտոբուսը: Ամենայն հավանականությամբ այդ սարքը

գործի է զգվել բջջային հեռախոսի միջոցով: Յարկ է նշել, որ այս պայթյունը տեղի ունեցավ այն բանից մեկ օր անց, երբ սկսվեց թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի իրաքյան սահման, ուր տեղակայված են PKK ռազմաբազաները: Պայթյունի պատասխանատվությունը ստանձնեց «Քուրդիստանի ազատագրման արժիվներ» (քրդերեն՝ TAK) խմբավորումը: Այս կապակցությամբ PKK արտաքին կապերի ներկայացուցիչ Ահմեթ Դենիզը հայտարարեց, որ PKK-ն որեւէ կապ չունի TAK-ի հետ, եւ իրենք որեւէ պատասխանատվություն չեն կրում ստամբուլյան պայթյունի համար:

Յարկ է նշել, որ 2010 թվականին սա առաջին պայթյունը չէր Ստամբուլում. հունիսի 8-ին նրա եվրոպական հատվածում տեղի ունեցած պայթյունի արդյունքում վիրավորվել է 15 մարդ՝ հիմնականում ոստիկաններ: Այս դեպքում էլ ձեռագիրը նույնն էր. պայթյունը տեղի էր ունեցել հենց այն պահին, երբ տեղադրված պայթուցիչի մոտով անցնելիս է եղել ոստիկաններով լի ավտոբուսը:

Հունիսի 30-ին PKK զինյալները Սղերթ նահանգում հարձակվել են տեղի ռազմաբազայի վրա ու սպանել 2 զինվորականի եւ 3 գյուղական պահապանի: Ահմեթ Դենիզի տվյալներով՝ վերջին մեկ ամսվա ընթացքում թուրքական բանակի եւ PKK-ի միջեւ ընդհանուր առմամբ տեղի է ունեցել 52 բախում, ինչի արդյունքում զոհվել է 126 թուրք զինծառայող եւ 26 քուրդ զինյալ: Դրա համար էլ վերջին շրջանում թուրքական հասարակությունում ուժեղացել է այն միտումը, որ նա չի ցանկանում իր երեխաներին ուղարկել PKK-ի դեմ պատերազմին:

Վերջին մեկ ամսվա ընթացքում PKK գործողությունները վկայում են այն մասին, որ նա փոխել է մարտավարությունը. խաղաղ բնակչության շրջանում պայթյուններ իրականացնելու եւ զբոսաշրջիկներին ահաբեկելու փոխարեն այժմ պլանավորված է հյուսիս թուրքական գործառնները եւ ստիպել նրանց՝ դիմելու պաշտպանական գործողությունների: Դրա համար էլ PKK ներկայիս գործողությունները դժվար է որակել որպես ահաբեկչական: Այս իրադարձություններից առաջ PKK-ն հայտարարել էր մեկ տարի տեւած զինադադարի միակողմանի չեղյալ հայտարարման եւ հունիսի 1-ից թուրքական բանակի դեմ ռազմական գործողություններ ձեռնարկելու մասին: Սա խոսում է այն մասին, որ վերջին շրջանում Թուրքիայում ընթացող արյունալի իրադարձությունները չէին կարող անակնկալ լինել թուրքական իշխանությունների համար: PKK գործողությունները բողոքի մեծ ալիք բարձրացրին ողջ երկրում եւ լայնամասշտաբ քննարկման առարկա հանդիսացան:

Այս կապակցությամբ հունիսի 21-ին Չանքայա նախագահական նստավայրում երկրի նախագահ Արդուլահ Գյուլի նախագահությամբ տեղի ունեցավ անվտանգության նիստ: Դրանում դիտարկվել են ահաբեկչական գործողությունների ավելացման պատճառները եւ ընդունվել 3 կարեւոր որոշում. ա) PKK գործունեությունը չեզոքացնելու համար անհրաժեշտ է վերջ տալ ԱՄՆ-ի կողմից տրամադրվող հետախուզական տվյալների ոչ շարունակական բնույթին, բ) ԱՄՆ-ի եւ Իրաքի վրա մեծացնել դիվանագիտական ճնշումը, որպեսզի դա հանգեցնի նրան, որ Զյուսիսային Իրաքի տարածաշրջանային վարչակազմի լիդեր Մասուդ Բարզանին կարողանա վերահսկել PKK-ի կողմից սահմաններն անցնելու գործընթացը, գ) ուշադրություն է դարձվելու ՁԼՍ-ի կողմից ահաբեկչության հետ կապված զգայական հաղորդումների ցուցադրությանը (ինչն անուղակիորեն բարձրացնում է ապստամբների իմիջը):

Փաստորեն, Թուրքիայում գտնում են, որ անհրաժեշտ է համագործակցել Բարզանիի հետ: Ներկայումս այդ համագործակցությունը որակվում է որպես անբավարար: Միեւնույն ժամանակ, Թուրքիայի ԱԳՆ-ը դրականորեն գնահատեց Քրդական տարածաշրջանային վարչակազմի կողմից Շենդինլիի ահաբեկչությունների քննադատությունը: Այժմ պլանավորված է թուրք-իրաքյան սահմանին նոր անցակետեր կառուցել:

Միեւնույն ժամանակ, Իրաքի ղեկավարությունը մերժել է PKK-ի դեմ պայքարի մեջ ներգրավվելու Թուրքիայի առաջարկը՝ հայտարարելով, որ Իրաքը թուրք ոստիկան չէ: Բնականաբար, դա ողջունվեց PKK-ի կողմից:

Հունիսի 22-ին Թուրքիայի Գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ Իլքեր Բաշբուլը, հանդես գալով Չանքաքալե օկրուգում գեներալների ու ծովակալների համար նախատեսված «Մետաքսե ճանապարհ 2010» սեմինարում, նշեց. «Արդեն 25 տարի է, ինչ Թուրքիան պայքարում է PKK ահաբեկչական կազմակերպության դեմ: Ահաբեկչության դեմ պայքարում մեր գլխավոր նպատակն ահաբեկիչների ու նրանց հովանավորների հույսերն ի դերեւ հանելն է: Ահաբեկիչները պետք է գիտակցեն, որ բռնության ու ահաբեկչության միջոցով ոչնչի չեն հասնի: Սխալ կլինի կարծել, որ միայն տնտեսական եւ սոցիալ-մշակութային միջոցներ ձեռնարկելը բավարար կլինի ահաբեկչական կազմակերպությունների վերացման համար: Դրա համար էլ, քանի դեռ ամբողջովին չի ոչնչացվել ահաբեկչական կազմակերպությունը, մենք պետք է լրիվ վճռականությամբ պայքարենք դրա դեմ»:

Բաշբուլը նաեւ հավելել է, որ այս հարցում ՆԱՏՕ-ն պետք է առավել ակտիվ գործի. «Ներկայիս սպառնալիքի պարագայում միջպետական

համագործակցությունը դառնում է առավել անհրաժեշտ: Տվյալ իրավիճակում մեծանում է ՆԱՏՕ դերը որպես կոլեկտիվ անվտանգության եւ պաշտպանության կարելուր կազմակերպություն: Հետեւաբար, չսահմանափակվելով միայն իր տարածաշրջանում գործողությունների իրականացմամբ՝ ՆԱՏՕ-ն նույնպիսի ակտիվությամբ պետք է գործի մյուս շրջաններում եւս, ուր իր անդամների կոլեկտիվ անվտանգության շահերը սպառնալիքի տակ են հայտնվել»: Բաշբուղը Բրյուսելին կոչ է արել վերափոխել ՆԱՏՕ կանոնադրության 5-րդ հոդվածը՝ առաջարկելով դրանում ներառել հրթիռային հարձակման ու էներգետիկ անվտանգության սպառնալիքներ եւ ահաբեկչություն բառերը:

Հունիսի 22-ին հանդես գալով Արդարություն եւ զարգացում կուսակցության (ԱԶԿ) գլխավորած խորհրդարանական խմբակցության նիստում՝ Էրդողանը քննադատել է ընդդիմությանը, որը կոչ է անում վերջ դնել դեմոկրատական նախաձեռնություններին եւ արտակարգ դրություն մտցնել երկրի արեւելյան վիլայեթներում. «Դեմոկրատական նախաձեռնությունների ձեռնարկումը որեւէ կապ չունի ահաբեկչական գործողությունների հետ: Մենք «ազգային միասնության ու եղբայրության» այս նախագիծը ձեռնարկել ենք նրա համար, որ Թուրքիան ազատենք խրոնիկ խնդիրներից: Դեմոկրատական նախաձեռնությունների տապալումը հավասարազոր է այս երկրին, նրա երեխաներին ու երիտասարդությանը դավաճանելուն: Եթե մենք կասեցնենք դեմոկրատական նախաձեռնությունները, ապա դրանից կշահեն երիտասարդների արյունով սնվող վամպիրները: Ասում են, թե անհրաժեշտ է արտակարգ դրություն մտցնել: Սակայն դա նեղություն կպատճառի որոշակի շրջանների բնակիչներին: Արտակարգ դրությունը կխորացնի ահաբեկչությունը: Արտակարգ դրություն պահանջելը նշանակում է հանձնվել ահաբեկչությանը»:

Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն, հանդես գալով Հարավարեւելյան Եվրոպայի երկրների արտգործնախարարների նիստում, նշել է, որ բոլոր նրանց հանդեպ, ովքեր Եվրոպայում աջակցում են PKK-ին, Թուրքիան կվարվի նույն մեթոդով: Դավութօղլուն, PKK-ի հետ կապված, նախազգուշացրել է Իրաքին ու ԱՄՆ-ին. «Մենք ակնկալում ենք ոչ թե բառացի, այլ՝ գործուն աջակցություն: Մենք ստեղծել ենք եռակողմ մեխանիզմ այս օրերի համար եւ մեծ կարեւորություն ենք տալիս այդ մեխանիզմն էֆեկտիվ կերպով գործի գցելուն»:

Իր հերթին Էրդողանը նշել է. «Ահաբեկչական կազմակերպությունը վնասում է ոչ միայն Թուրքիային, այլեւ լուրջ սպառնալիք է բալկանյան ու եվրոպական երկրների համար: Չնայած դրան՝ որոշ եվրոպական

երկրներ անհրաժեշտ աջակցություն չեն ցուցաբերում Թուրքիային՝ ահաբեկչության դեմ պայքարում: Կան այնպիսի եվրոպական երկրներ, որոնք ցայժմ չեն դադարեցրել ահաբեկչական կազմակերպություններին ցուցաբերվող ֆինանսական աջակցությունը, աչք են փակում նրանց ծավալած գործունեության վրա, հանցագործներին չեն հանձնում Թուրքիային: Դրա համար էլ կարելու է ահաբեկչության դեմ պայքարում աջակցել Թուրքիային: Ահաբեկչության դեմ պայքարի համար պետք է ստեղծվի համատեղ պլատֆորմ: PKK-ն ահաբեկչական կազմակերպություն հռչակելով գործը չի ավարտվում: Եվրոպայի եւ, մասնավորապես, Բալկանների անվտանգությունն սկսվում է Չաքքարիից, Շենդինլիից: Շենդինլիում անվտանգության բացակայության դեպքում անհնար է խոսել բալկանյան եւ եվրոպական երկրների լրիվ անվտանգության մասին: Կրակը, որն այսօր այրում է ինձ, մի գեղեցիկ օր էլ կսկսի այրել այլ երկրներին: Եվ այդ ժամանակ արդեն շատ ուշ կլինի»:

Հունիսի 25-ին Ստամբուլում Գյուլի նախագահությամբ տեղի ունեցավ Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) նիստը, որը տևեց գրեթե 7 ժամ: Նիստից հետո ԱԱԽ Գլխավոր քարտուղարության հրապարակած փաստաթղթում նշված էր, որ ահաբեկչության դեմ անգիջում պայքարը կշարունակվի այնքան, քանի դեռ տվյալ սպառնալիքն ամբողջովին չի վերացվել: Նիստի ժամանակ դիտարկվել է նաև երկրի անվտանգության հետ կապված ներքին եւ արտաքին իրադարձությունների զարգացումը:

Քրդական խաղաղություն եւ ժողովրդավարություն կուսակցության (ԽԺԿ) նախագահ Սելահեթթին Դեմիրթաշն իշխանություններին խորհուրդ է տվել քաղաքական կամք ցուցաբերել եւ երկխոսության մեջ մտնել PKK-ի հետ. «Թուրքիայում գոյություն ունի ոչ թե ահաբեկչության, այլ՝ քրդական խնդիր: Քուրդ ժողովրդի լեզվի, մշակույթի ընդունման խնդիր կա: Իշխող կուսակցությունը, այս խնդիրը լուծելու փոխարեն, ավելի է ուժեղացրել ձուլման քաղաքականությունը»: Բացի այդ, Դեմիրթաշն երդողանին մեղադրել է ստախոսության եւ իրենց կուսակցությունը փակելու հրահանգ տալու մեջ. «Երդողանը Թուրքիայում աճող ահաբեկչության մեղքը բարդում է ԽԺԿ-ի վրա: Եթե Թուրքիայի վարչապետն ուղիղ եթերով ժողովրդի առաջ սուտ է խոսում, ուրեմն նրա քաղաքական գաղափարներն սպառվել են: Մեկ տարի առաջ նա հայտարարեց քրդական հարցի կարգավորման մասին, սակայն ոչինչ չարեց եւ մեզ վրա հարձակվելով փորձում է խուսափել պատասխանատվությունից»:

Իսկ ահա ԽԺԿ խորհրդարանական Բենգի Յըլդըզը հունիսի 21-ին Բաթմանում տեղի ունեցած քրդերի ցույցի ժամանակ քրդերին կոչ է արել իրենց երեխաներին չուղարկել այս «կեղտոտ» պատերազմին. «Ով պատերազմ է ցանկանում, թող նա էլ ուղարկի իր երեխաներին: Թող որ այս երկրի ղեկավարները՝ վարչապետը, նախագահը եւ գեներալներն ուղարկեն իրենց երեխաներին: Մենք մեր երեխաներին ուղարկում ենք բանակ եւ ամեն օր ստանում ենք նրանց դիակները: Ավելի լավ է ձեր երեխաները 1, 2 եւ 10 տարի բանտում անցկացնեն, քան նրանց ուղարկեք բանակ»: Սա առիթ հանդիսացավ, որ Բաթմանի նահանգային դատախազությունը «զինվորական ծառայությունից խուսափելուն աջակցելու» եւ «ահաբեկչական կազմակերպության օգտին պրոպագանդա տանելու» մեղադրանքով հետաքննություն սկսի Յըլդըզի դեմ, որն ամիսներ առաջ հայտարարել էր, թե Թուրքիան պետք է ներողություն խնդրի դարասկզբին հայերի դեմ իրականացրած կոտորածի համար:

Ներկայումս Թուրքիայում PKK ակտիվացման հետ կապված առկա են մի շարք տեսակետներ. ա) «ահաբեկչության դեմ» պատերազմը ձեռնառու է Էրդողանին, որն էլ նախաձեռնել է այս ամենը, բ) այս գործողությունների հետեւում կանգնած է Իսրայելը՝ դրանով իսկ Էրդողանի համար բացելով «երկրորդ ճակատ», գ) այն նախաձեռնել են իշխանությունից դժգոհ թուրք զինվորականները:

Չնայած դրանց՝ կարելի է կարծել, որ այս ամենի նախաձեռնողը հենց PKK-ն է, որը դժգոհ է իշխող կուսակցության վարած քաղաքականությունից: Սկզբնական շրջանում Էրդողանը մեծ հարգանք էր վայելում քրդերի շրջանում, քանի որ մշտապես հայտարարում էր, թե քրդական խնդիրն իր անձնական խնդիրն է եւ խոստանում էր շուտափույթ լուծում տալ դրան: Սակայն ներկայումս պարզվեց, որ թուրքական կառավարությունը պատրաստ չէ լուրջ բարեփոխումներ իրականացնել, որոնք կարող են լուծել քրդական խնդիրը: Թուրքական հասարակությունը նույնպես պատրաստ չէ դրան: ԱԶԿ-ն չի կարող անվերջ խոստումներ տալ եւ իրական քայլեր չձեռնարկել այդ ուղղությամբ: PKK-ն գտնում է, որ Էրդողանը շարունակում է իր նախորդների վարած քրդերի ծուլման քաղաքականությունը: Վերջին 2-3 տարում Թուրքիայում ձերբակալվել են մոտ 2000 քուրդ քաղաքական գործիչ ու իրավապաշտպան, ինչպես նաեւ հազարավոր 11-18 տարեկան քուրդ երեխաներ (այդ թվում նաեւ աղջիկներ): Ի դեպ, վերջիններիս դատավճիռը շատ դեպքերում ավելի խիստ է ստացվում, քան, ասենք, PKK զինյալներինը: Բացի այդ, ԱԶԿ-ն թուրքական բանակ զորակոչված քրդերին ուղարկում է PKK զինյալների

դեմ: Ստացվում է, որ քրդերը սպանում են միմյանց: Որոշակի տվյալներով՝ PKK-ի դեմ պայքարում թուրքական բանակի սպանվածների կեսից ավելին քրդեր են:

Բացի այդ, եթե ԱԶԿ-ին հաջողվի բարեհաջող ավարտի հասցնել սեպտեմբերի 12-ին կայանալիք սահմանադրական բարեփոխումների հանրաքվեն, ապա կարող է մինչև 2011 թվականի խորհրդարանական ընտրությունները լրջորեն զբաղվել «Քրդական նախաձեռնություններով», ինչն էլ իր հերթին կասկածի տակ կդնի PKK գոյության անհրաժեշտությունը: Դրա համար էլ պատահական չէ այն հանգամանքը, որ երբ 2009 թվականի նոյեմբերի սկզբին ԱԶԿ-ն առաջ քաշեց «Քրդական նախաձեռնությունները», դրանից անմիջապես հետո PKK-ն բավական ակտիվացավ Թուրքիայում:

ԻՐԱՆԸ ԵՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՍԵՒԱԿ Սարուխանյան

Չունիսի 10-ին ՄԱԿ ԱԽ-ն ընդունեց Իրանի դեմ նոր պատժամիջոցների կիրառման վերաբերյալ 1929 բանաձեռը: ԱԽ անդամ 15 պետություններից 12-ը կողմ քվեարկեցին բանաձեռին, Թուրքիան եւ Բրազիլիան՝ դեմ, իսկ Լիբանանը ձեռնպահ մնաց: Չնայած այն տեղեկատվական ֆոնին, որը ստեղծվել էր ԱԽ-ում Իրանի հարցի քննարկման շուրջ, ընդունված բուն պատժամիջոցները կոշտ անվանել չի կարելի:

Պատժամիջոցները

1929 բանաձեռն իր հիմնական մասերով ընդհանուր առմամբ.

ա) սահմանափակում է միջազգային շուկայում մի շարք իրանական ձեռնարկությունների գործունեությունը, որոնց թվում են Իրանի միջուկային ծրագրի իրականացման աշխատանքներին ընդգրկված եւ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հետ անմիջական կապ ունեցող հաստատություններ,

բ) ՄԱԿ անդամ պետությունների տարածքներում գրանցված բանկերին կոչ է անում սահմանափակել գործառնությունն իրանական մի շարք ֆինանսական հաստատությունների հետ, որոնց թվում է «Առաջին Արեւելյան PLC բանկը», որը կասկածվում է մի քանի հարյուր միլիոն ԱՄՆ դոլար իրանական միջուկային ծրագրի բաղադրիչների ձեռքբերմանն ուղղելու մեջ,

գ) ՄԱԿ-ը իրավունք է ստանում վերահսկել երեք իրանական նավագնաց ընկերությունների նավերը եւ իրականացնել դրանց ստուգումը ցանկացած պահի, երբ կասկած կա, որ դրանք կատարում են ապօրինի զինամթերքի կամ երկակի նշանակության տեխնիկայի տեղափոխում:

Ընդհանուր առմամբ պատժամիջոցներ են մտցվել իրանական 37 ձեռնարկության եւ ընկերության նկատմամբ:

Այստեղ ուշադրության է արժանի այն, որ այս ընկերություններից եւ բանկերից ոչ մեկն իրանական տնտեսության «գայլերից» չէ: Նրանց գործունեությունը հիմնականում սահմանափակվում է ռազմական արդյունաբերության եւ միջուկային ծրագրի սպասարկմամբ: Այսպիսով, դրանց դեմ պատժամիջոցների կիրառումը կարող է վնաս հասցնել Իրանի

ռազմարդյունաբերությանը, սակայն լուրջ ազդեցություն երկրի մակրոտնտեսական եւ սոցիալական իրավիճակի վրա չի կարող ունենալ:

Միեւնույն ժամանակ, պատժամիջոցները, որոնք կիրառվել են սպեցիֆիկ գործառույթներ իրականացնող ընկերությունների նկատմամբ, ոչ մի կերպ չեն ազդում Իրանի արտաքին առևտրական կապերի վրա. արտասահմանյան պետությունների հետ համագործակցության ողջ ծավալը Իրանը կպահպանի անգամ կոշտ անվանվող այս պատժամիջոցներից հետո: Բանաձեւը ոչ մի կերպ չի անդրադառնում Թեհրանի հիմնական շահույթի աղբյուրի՝ նավթային ոլորտի վրա: Այս պայմաններում ասել, թե պատժամիջոցներն Իրանի դեմ լուրջ են, չի կարելի, չնայած միջազգային քաղաքական եւ տեղեկատվական հանրությունը փորձեց դրանք այդպիսին ներկայացնել:

Իրանի պատասխանը

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Իրանի արձագանքը 1929 բանաձեւին ձեռով բավական կոշտ էր, բովանդակությամբ՝ հանգիստ: Պատժամիջոցների ընդունումից կես ժամ հետո Իրանի ԱԳ նախարար Մ.Մոթաքին հայտարարեց, որ ընդունված որոշումը «Արեւմուտքի պարտությունն է եւ Իրանի ճշմարտացիության վկայումը»: Նա նշեց նաեւ, որ «բանաձեւի ընդունումից հետո Իրանը չի սահմանափակելու որեւէ գործունեություն միջուկային էներգետիկայի ոլորտում. բոլոր աշխատանքները շարունակվելու են նոր թափով եւ եռանդով»:

Գրեթե նույն արտահայտություններով պատժամիջոցների վերաբերյալ մեկ օր հետո հանդես եկավ Իրանի նախագահը, որն ավելացրեց միայն, որ «որոշ պետություններ, պաշտպանելով այս բանաձեւը, ցույց տվեցին իրենց թուլությունը»: Խոսքն, ամենայն հավանականությամբ, Ռուսաստանի մասին է, որի հետ, այնուամենայնիվ, հունիսի երկրորդ կեսից Իրանը սկսեց վերականգնել խաթարված հարաբերությունները: Հունիսի 4-ին Իրանի նախագահը Բոնաբում հանքարդյունաբերական գործարանի պաշտոնական բացման արարողության ժամանակ քննադատությամբ հանդես եկավ Արեւմուտքի դեմ՝ ասելով, որ միայն Արեւմուտքն է մեղավոր բանաձեւի ընդունման մեջ, սակայն պատժամիջոցներ կիրառելով «նրանք փորձում են խուսափել իրենց մահացու վախճանից»:

Իրանական պատասխանի առումով՝ հետաքրքրական է նաեւ հունիսի 4-ին չինական «Սինհուա» լրատվական գործակալության տարածած տեղեկատվությունը, ըստ որի՝ Իրանի Կենտրոնական բանկը սկսել է 45 մլրդ եվրո վաճառել իր պահուստներից եւ դրա փոխարեն ոսկի ու դոլար

զմել: Այս տեղեկությունը հերթական հարված կարող էր հասցնել եվրոյին, եթե իրանական կողմը չարձագանքեր, թե «տեղեկությունը տվյալ պահին չի համապատասխանում իրականությանը»:

«Տվյալ պահին» արտահայտությունը ցույց է տալիս, որ Թեհրանը պատրաստ է գնալ եվրոյին լուրջ հարված հասցնելուն, սակայն դեռևս որոշում չունի այս հարցում: Իսկ այդ որոշման չընդունման գինը, ամենայն հավանականությամբ, ԵՄ-ի կողմից ամերիկյան միակողմանի պատժամիջոցների պաշտպանությունից հրաժարվելն է: Իրանը շահագրգռված չէ, որպեսզի եվրոպական երկրները պաշտպանեն 1929 բանաձեւից զրեթե անմիջապես հետո ԱՄՆ նախագահի հայտարարած եւ հուլիսին ԱՄՆ Կոնգրեսի հավանությանն արժանացած միակողմանի նոր պատժամիջոցներն Իրանի դեմ: Իրանի ԱԳ նախարար Մ.Մոթաքին ԵՄ անդամ պետությունների ԱԳ նախարարներին ուղղված 10 էջանոց նամակում խնդրում եւ միաժամանակ զգուշացնում է. «Պետք չէ ընդունել ոչ ռացիոնալ որոշումներ, որոնք կարող են մահացու հարված հասցնել ԻԻՀ-ԵՄ հարաբերություններին»: Նշենք, որ այս տարվա առաջին կեսին հիմնականում եվրոպական շուկաներում ակտիվ գործունեության շնորհիվ Իրանի ոչ նավթային արտահանումն ավելացել է 30 տոկոսով: Իրանն ամեն կերպ փորձելու է ԵՄ-ը հետ պահել նոր պատժամիջոցների կիրառումից:

ԵՄ եւ ԱՄՆ ընդհանուր «իրանական քաղաքականության» տրոհումն այսօր Թեհրանի համար կարելուր նշանակություն ունի:

Մյուս կողմից, բավական լուրջ մտորումների տեղիք է տալիս այն, որ Իրանի կողմից եվրոյի վաճառքի մասին տեղեկությունը տարածել է չինական խոշորագույն տեղեկատվական գործակալությունը, ինչը, հնարավոր է, խոսում է այս տեղեկատվական գործողության համատեղ՝ իրանա-չինական լինելու մասին:

Իրանի տարածաշրջանային ակտիվացումը

Չնայած Իրանի լրատվական դաշտում միջուկային ծրագիրը վերջին տարիներին ամենաշատ քննարկվող թեման է եղել, վերջին մեկ ամսվա ընթացքում այն տեղը զիջել է տարածաշրջանային լուրերին եւ տարածաշրջանային զարգացումներին նվիրված վերլուծություններին, որոնցից կենտրոնականները նվիրված են Իրաքին եւ Աֆղանստանին: Այս երկու պետություններում ընթացող գործընթացները դարձել են նաեւ կարելուր ներիրանական գործոններ, քանի որ Իրանի քաղաքական եւ հոգեւոր գործիչները զրեթե ամեն օր հայտարարություններ են անում Իրաքում եւ Աֆղանստանում տիրող իրավիճակի վերաբերյալ: Այս

երեւույթը բավական ուշագրավ է, քանի որ Իրանի միջուկային ծրագիրը հանգեցրել է Թեհրանի դեմ համենատաքար լուրջ պատժամիջոցների կիրառմանը, ԱՄՆ եւ ԵՄ ղեկավարները գրեթե ամեն օր հայտարարություններ են անում իրանական հիմնախնդրի վերաբերյալ, իսկ իրանական քաղաքական գործընթացներում ամենասկտիվ քննարկվող հարցերը վերաբերում են ոչ թե միջուկային ծրագրին, այլ Իրաքին ու Աֆղանստանին:

Այս երկու պետություններում տիրող իրավիճակի վերաբերյալ իրանական հայտարարությունների վերլուծությունն առաջին իսկ հայացքից ցույց է տալիս, որ դրանք, ամենայն հավանականությամբ, մաս են կազմում մի ռազմավարության, որի նպատակն է Իրաքն ու Աֆղանստանն ավելի մեծ «գլխացավանք» դարձնել ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի համար: Իրանը սկսել է ավելի հստակորեն ապակայունացնել իրավիճակն Իրաքում, ինչի դրսեւորումներից է այս երկրում շարունակվող խորհրդարանական ճգնաժամը, որն արդյունք է հիմնականում «թեհրանամետ» շիական խմբերի կողմից «մեծ կոալիցիայի» ստեղծման դեմ տարվող աշխատանքների:

Ամենայն հավանականությամբ, Թեհրանում եկել են որոշման, որ միջուկային ծրագրում «հետդարձ» էլ չի լինելու, ինչը բերելու է հերթական բանակցությունների տապալմանը եւ նոր պատժամիջոցների: Արդյունքում՝ նաեւ ռազմական հարվածների, ինչի հակազդեցությամբ Իրանն ակտիվ զբաղվում է Իրաքում եւ Աֆղանստանում: Ապակայունացնելով իրադրությունն այս երկու երկրներում՝ Իրանը ոչ միայն նոր լծակներ է ձեռք բերում տարածաշրջանային զարգացումներում, այլ նաեւ «կապում» է իր դեմ ռազմական հարվածի պոտենցիալ իրականացնող Միացյալ Նահանգների ձեռքերը:

Հարկ է ավելացնել, որ Թեհրանը սկսել է ավելի ակտիվ գործել նաեւ Կենտրոնական Ասիայում եւ Հարավային Կովկասում: Հայ-ադրբեջանական հակամարտության եւ դրդական ճգնաժամի վերաբերյալ իրանական կողմը բավական շատ է խոսում վերջին շրջանում, անում իրարամերժ հայտարարություններ եւ ցույց տալիս, որ այստեղ նույնպես Իրանն ունի իր շահը, որի պահպանմանը հետամուտ է լինելու ամեն կերպ:

**ԱՄՆ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԸ
ԲԵՆԻՀԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

2009թ. հունվարին ստանձնելով ԱՄՆ նախագահի պաշտոնը՝ Բարաք Օբաման ձեռնամուխ եղավ խոստացված փոփոխությունների իրականացմանը թե՛ ներքին եւ թե՛ արտաքին քաղաքականության ոլորտներում: Արտաքին քաղաքականության ոլորտում ամերիկյան նոր վարչակազմի առջեւ ծառայած կարեւորագույն հիմնախնդիրների թվում էին Իրանի միջուկային ծրագրի շուրջ ստեղծված իրավիճակը, ինչպես նաեւ արաբ-իսրայելական բանակցային գործընթացը:

Օբամայի վարչակազմը կտրուկ փոփոխություններ կատարեց թե՛ Իրանի հանդեպ վարվող քաղաքականությունում եւ թե՛ արաբ-իսրայելական բանակցային գործընթացում: Օբաման հրաժարվեց Իրանում վարչակարգի փոփոխության հասնելու եւ այդ երկրի հետ ուղղակի երկխոսությունը բացառելու քաղաքականությունից: Իրանի հանդեպ ամերիկյան նոր վարչակազմը սկսեց իրականացնել «մտրակի եւ քաղցրաբլիթի» քաղաքականություն: Պաշտոնական թեհրանին առաջարկվեց հստակ այլընտրանք. կամ ԱՄՆ-ի հետ ուղղակի երկխոսության միջոցով հասնել առկա վիճելի հարցերի կարգավորմանը եւ վերջ տալ Իրանի միջազգային մեկուսացմանը, կամ առավել մեծ ճնշումների ենթարկվել միջազգային հանրության կողմից: Իրանի հետ ուղղակի երկխոսություն սկսելու եւ միջազգային այլ ազդեցիկ կենտրոնների հետ համագործակցելու պատրաստակամությունն զգալիորեն մեծացրին ԱՄՆ հնարավորությունները՝ Իրանի հանդեպ իրականացվելիք քաղաքականության խնդրում այլ տերությունների հետ միասնական դիրքորոշում ձեւավորելու հարցում: 2009թ. հոկտեմբերին Իրանին ներկայացվեց ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական հինգ անդամների եւ Քերմանիայի համատեղ առաջարկը՝ ուղղված այդ երկրի միջուկային ծրագրի շուրջ առկա փակուղային իրավիճակի հաղթահարմանը: Նախնական համաձայնությունից հետո Իրանի իշխանությունները փաստացի մերժեցին այդ առաջարկը, ինչը հնարավորություն տվեց ԱՄՆ իշխանություններին Անվտանգության խորհրդի անդամ այլ պետությունների հետ միասին ձեռնամուխ լինել Իրանի հանդեպ պատժամիջոցներ նախատեսող նոր բանաձեւի մշակմանը: Շուրջ կես տարի տեւած

բանակցություններից հետո 2010թ. հունիսի 9-ին Անվտանգության խորհուրդն ընդունեց թիվ 1929 բանաձեռը: Բանաձեռին կողմ քվեարկեցին ՄԱԿ Անվտանգության խորհրդի բոլոր մշտական անդամները, այդ թվում Ռուսաստանը եւ Չինաստանը:

Օբամայի վարչակազմի առջև ծառայած հաջորդ կարելոր մարտահրավերը արաբ-իսրայելական հակամարտության կարգավորման ուղղությամբ ջանքերի ակտիվացումն էր: Այս քաղաքականության նպատակներից մեկը մահմեդական աշխարհի հետ ԱՄՆ հարաբերությունների կարգավորումն էր, քանի որ երկկողմ անվտանգության հիմնական պատճառներից մեկը Իսրայելին ցուցաբերվող ԱՄՆ անվերապահ աջակցությունն էր: Մահմեդական աշխարհի հետ հարաբերությունների կարգավորմանն էր նվիրված 2009թ. հունիսին Օբամայի ելույթը Կահիրեի համալսարանում, որտեղ նա անդրադարձավ նաև արաբ-իսրայելական հակամարտությանը: Իսրայելի հետ ԱՄՆ հարաբերություններն ուղղակիորեն առնչվում էին նաև Իրանի հանդեպ իրականացվող ամերիկյան քաղաքականությանը՝ միաժամանակ որոշակի ազդեցություն թողնելով նաև թուրք-ամերիկյան շփումներում արձանագրվող զարգացումների վրա:

Արաբ-իսրայելական բանակցային գործընթացում Օբամայի վարչակազմը բավական ակտիվ դիրքորոշում էր որդեգրել, ընդ որում՝ նրա հիմնական նպատակը Իսրայելի իշխանություններից որոշակի զիջումներ կորզելն էր: Ամերիկյան նոր վարչակազմի կարծիքով, արաբ-իսրայելական հակամարտության գործընթացում տեղաշարժերի արձանագրումը կթուլացներ մահմեդական ժայրահեղական խմբավորումների դիրքերը, ինչպես նաև կնվազեցներ «Ալ Բաիդայի» եւ այլ ահաբեկչական կազմակերպությունների կողմից նոր ահաբեկիչների հավաքագրման հնարավորությունը՝ միաժամանակ բարձրացնելով ԱՄՆ վարկանիշը մահմեդական աշխարհում:

2009թ. մայիսին Օբամա – Նեթանյահու պաշտոնական առաջին հանդիպման ժամանակ ԱՄՆ նախագահը Իսրայելի վարչապետին առաջարկեց կատարել մի քայլ, որը Իսրայելի նախկին որեւէ վարչապետ չէր ձեռնարկել՝ դադարեցնել Արեւելյան Երուսաղեմում իսրայելական բնակարանաշինության ծրագրերը: Իր հերթին պաղեստինյան կողմն այս պահանջի կատարումը նախապայման էր համարում բանակցությունների վերսկսման համար: Սակայն Իսրայելի աջակողմյան կառավարությունը պատրաստ չէր այդ պահանջի կատարմանը: Օբամայի հետ հանդիպումից մի քանի օր անց Նեթանյահուն հայտարարեց, որ Երուսաղեմը հրեաների հավերժական մայրաքաղաքն է, եւ այն այլեւս

երբեք չի բաժանվելու տարբեր մասերի: Նշենք, որ Օբաման եւ Նեթանյահուն ոչ պաշտոնական հանդիպումներ ունեցել էին մինչեւ նախագահի եւ վարչապետի պաշտոնների ստանձնումը: Վերջին նման հանդիպումը կայացել էր Երուսաղեմում 2008թ. հուլիսին: Այն բավական ջերմ մթնոլորտում էր անցել. Օբամայի խնդիրն էր ձեռք բերել ԱՄՆ հրեական համայնքի վստահությունը, իսկ Նեթանյահուն գիտակցում էր, որ իշխանության գալու դեպքում իրեն չի կարող թույլ տալ լարված հարաբերություններ ունենալ ամերիկյան վարչակազմի հետ: Սակայն 2009թ. մայիսին կայացած հանդիպումը ցույց տվեց, որ կողմերի դիրքորոշումները մի շարք էական հարցերում բավականաչափ տարբերվում են:

Միաժամանակ, հարկ է նշել, որ Օբամայի վարչակազմում եւս միանշանակ տեսակետ չկար Արեւելյան Երուսաղեմում բնակարանաշինության դադարեցման պահանջի նպատակահարմարության հարցում: Մերձավոր Արեւելքում ԱՄՆ բանազնաց Ջորջ Միքելը գտնում էր, որ նախքան արաբ-իսրայելական բանակցությունների սկիզբը Իսրայելին նման պահանջի առաջադրումը բացասական հետեւանքներ կունենա գործընթացի համար: Սակայն Օբամայի աշխատակազմի ղեկավար Ռահմ Էմանուելը, որը Պարսից ծոցի առաջին պատերազմի ժամանակ որպես քաղաքացիական մեխանիկ կամավոր ծառայել էր իսրայելական բանակում, պնդում էր, որ անհրաժեշտ է հենց սկզբից քննարկել բոլոր բարդ հարցերը: Մի շարք քննարկումներից հետո Օբաման հավանություն տվեց իր աշխատակազմի ղեկավարի առաջարկին:

ԱՄՆ–Իսրայել հարաբերություններում լարվածության աճ արձանագրվեց 2009թ. հուլիսի սկզբին, երբ Երուսաղեմի քաղաքային իշխանությունները որոշեցին քանդել Արեւելյան Երուսաղեմում գտնվող հյուրանոցներից մեկը՝ այնտեղ հրեա վերաբնակիչների համար 20 նոր բնակարան կառուցելու նպատակով: ԱՄՆ պետքարտուղարության ներկայացուցիչները հուլիսի 17-ին եւ 18-ին Վաշինգտոնում հանդիպումներ ունեցան Իսրայելի դեսպան Մայքլ Օրենի հետ՝ պահանջելով չեղյալ համարել այդ որոշումը: Սակայն Նեթանյահուն տեղի չտվեց այդ պահանջներին եւ արդեն հուլիսի 19-ին հայտարարեց, որ Երուսաղեմի ողջ տարածքում որեւէ սահմանափակում չի մտցվելու հրեաների համար նախատեսված շինարարության համար: Միաժամանակ, Օբամայի քննադատությամբ սկսեցին հանդես գալ ԱՄՆ հրեական լոբբիստական կազմակերպությունները, ինչպես նաեւ Ներկայացուցիչների պալատի եւ Սենատի հրեա անդամները: Երկկողմ բանակցությունների արդյունքում 2009թ. նոյեմբերի 25-ին Իսրայելի կառավարությունը հայտարարեց բացառապես Արեւմտյան ափում բնակարանաշինության տասնամյա սառեցման

մասին՝ փաստացի մերժելով Արեւելյան Երուսաղեմում նմանատիպ քայլ կատարելու ամերիկյան կողմի պահանջը:

Իսրայելի կառավարության այս որոշումից հետո ամերիկյան վարչակազմը շարունակեց ինտենսիվ շփումները կողմերի հետ՝ ցանկանալով հասնել առնվազն անուղղակի իսրայելա-պաղեստինյան բանակցությունների մեկնարկին: Այս գործընթացին աջակցելու նպատակով 2010թ. մարտի սկզբին տարածաշրջան այցելեց փոխնախագահ Ջոզեֆ Բայդենը: Սակայն Բայդենի՝ Իսրայելում գտնվելու ժամանակ Երուսաղեմի քաղաքային իշխանությունները հայտարարեցին քաղաքի արեւելյան հատվածում 1600 նոր բնակարաններ կառուցելու որոշման մասին: Իսրայելական կողմի այդ քայլը տիպիկ անակնկալ էր ամերիկացիների համար: Պաղեստինյան իշխանությունները հայտարարեցին անուղղակի բանակցություններից հրաժարվելու մասին: Օբամայի վարչակազմի համար առավել եւս անընդունելի էր որոշման հրապարակման ժամանակը: 2010թ. մարտի 12-ին ԱՄՆ պետքարտուղար Յիլարի Բլինթոնը հեռախոսազրույց ունեցավ Նեթանյահուի հետ՝ նրանից պահանջելով ժամանակավորապես դադարեցնել շինարարությունը: Այս խնդիրը քննարկվեց մարտի 23-ին Վաշինգտոնում կայացած Օբամա – Նեթանյահու հանդիպման ժամանակ: Արդյունքում՝ կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին, որի համաձայն՝ Իսրայելի իշխանությունները չէին դադարեցնում Արեւելյան Երուսաղեմում իրականացվող շինարարությունը, սակայն դրա փոխարեն թույլատրում էին պաղեստինյան մի շարք կազմակերպությունների գրասենյակներ բացել Արեւելյան Երուսաղեմում:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ԱՄՆ – Իսրայել հարաբերություններում որոշակի լարվածություն էր առաջացնում նաեւ Իրանի հետ ուղղակի երկխոսություն սկսելու Օբամայի վարչակազմի պատրաստակամությունը: Նեթանյահուի կառավարությունը գտնում էր, որ պաշտոնական թեհրանն այդ քայլը կարող է ընկալել որպես ԱՄՆ թուլության եւ անվճռականության նշան եւ ավելի ակտիվ ձեռնամուխ լինել միջուկային զենքի ստեղծմանը: Պաշտոնական թեղ Ավիվը մտահոգություններ ուներ նաեւ ԱՄՆ-ի՝ Իսրայելի անվտանգությունն անվերապահորեն երաշխավորելու պատրաստակամության վերաբերյալ: Իսրայելական որոշ շրջանակներ անգամ հրապարակայնորեն Օբամային մեղադրում էին հակասեմիտիզմի մեջ՝ չնայած այն հանգամանքին, որ Չիկագոյի ազդեցիկ հրեական ընտանիքներն ակտիվորեն մասնակցել էին Օբամայի ընտրարշավի կազմակերպմանն ու ֆինանսավորմանը, իսկ Օբամայի կնոջ ազգականը ԱՄՆ առավել ազդեցիկ աֆրոամերիկացի ռաբբիներից

մեկն էր: ՄԱԿ Անվտանգության խորհրդի ընդունած՝ Իրանի դեմ նոր պատժամիջոցներ նախատեսող բանաձեւն անգամ ամբողջովին չի գոհացնում Իսրայելին:

Ի վերջո, բանակցային երկարատեւ գործընթացից հետո ամերիկյան իշխանությունները 2010թ. մայիսի սկզբին կարողացան հասնել կողմերի միջեւ անուղղակի բանակցությունների մեկնարկին: 2010թ. մայիսի 26-ին ընտանիքի հետ միասին մասնավոր այցով Իսրայելում գտնվող Ռահմ էմանուելը հանդիպեց Նեթանյահուի հետ եւ վերջինիս հրավիրեց հունիսի 1-ին այցելել Վաշինգտոն եւ հանդիպել Օբամայի հետ՝ իսրայելա-պաղեստինյան բանակցություններին եւ Իրանի միջուկային ծրագրին առնչվող խնդիրների քննարկման համար: Սակայն մայիսի 31-ին Գազայի ափ հումանիտար օգնություն տեղափոխող նավատորմի վրա իսրայելական հարձակումը, ինչի հետեւանքով զոհվեցին Թուրքիայի քաղաքացիներ, հարկադրեց Նեթանյահուին չեղյալ հայտարարել Վաշինգտոն նախատեսված այցը: Երկու երկրների ղեկավարները հանդիպեցին Վաշինգտոնում 2010թ. հուլիսի 6-ին: Իսրայելի վարչապետը պատրաստակամություն հայտնեց առաջիկա շաբաթների ընթացքում ուղղակի բանակցություններ սկսել պաղեստինցիների հետ: ԱՄՆ նախագահը եւս շեշտեց իսրայելա-պաղեստինյան ուղղակի բանակցություններ սկսելու անհրաժեշտությունը, որոնց վերջնական նպատակը պաղեստինյան անկախ պետության ստեղծումն է եւ, միաժամանակ, Իսրայելի անվտանգության ապահովումը:

ԱՄՆ մերձավորարեւելյան քաղաքականության մեջ զգալի դերակատարություն է տրված նաեւ Թուրքիայի հետ հարաբերություններին: Նախագահ Օբաման դեռեւս 2009թ. ապրիլին Թուրքիա կատարած այցելության ժամանակ հայտարարել էր այդ երկրի հետ հարաբերությունները զարգացնելու ամերիկյան նոր վարչակազմի մտադրության մասին՝ շեշտելով Թուրքիայի կարեւոր դերակատարությունը տարածաշրջանում: Սակայն թուրք-ամերիկյան, ինչպես նաեւ թուրք-իսրայելական հարաբերությունները վերջին մեկ տարվա ընթացքում առաջընթաց չեն արձանագրել: Թուրքիան ավելի ու ավելի ինքնուրույն քաղաքականություն է վարում տարածաշրջանում՝ ձգտելով ազատվել ԱՄՆ «կրտսեր գործընկերոջ» կարգավիճակից, ինչը բնորոշ էր երկկողմ հարաբերություններին Սառը պատերազմի ընթացքում: Իհարկե, սա չի նշանակում, որ Թուրքիայի եւ ԱՄՆ շահերը չեն կարող համընկնել, սակայն ակնհայտ է, որ մի շարք դեպքերում դրանք զգալիորեն տարբերվում են: Խնդիրն առավել ակնհայտ է Իրանի միջուկային ծրագրի առնչությամբ: Պատահական չէ այն հանգամանքը, որ

Թուրքիան ՄԱԿ Անվտանգության խորհրդում դեմ քվեարկեց Իրանի դեմ նոր պատժամիջոցներ նախատեսող բանաձեռին:

Վերջին մեկ տարվա ընթացքում բավական լարված են նաեւ թուրք-իսրայելական հարաբերությունները: Առկա տարածայնությունների հրապարակային դրսեւորումներից էին 2009թ. հունվարին Դավոսում Էրդողանի ընդհարումը Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի հետ, 2010թ. հունվարին Իսրայելում Թուրքիայի դեսպանի հանդեպ Իսրայելի փոխարտգործնախարարի ոչ վայելուչ պահվածքը: Հարաբերությունների հետագա վատթարացմանը նպաստեցին նաեւ Քազայի ափամերձ հատվածում տեղի ունեցած դեպքերը, որոնց հետեւանքով զոհվեցին Թուրքիայի քաղաքացիներ: Գիշտ է, կողմերը փորձում են հնարավորություններ գտնել առկա լարվածության թուլացման համար: 2010թ. հունիսի 30-ին Բրյուսելում կայացել է Թուրքիայի արտգործնախարարի հանդիպումը Իսրայելի արդյունաբերության, առեւտրի եւ աշխատանքի նախարարի հետ, որի ընթացքում քննարկվել են կողմերի միջեւ հարաբերությունների կարգավորման հնարավորությունները: Սակայն պաշտոնական թեւ Ավիվի կողմից Քազայի դեպքերի առնչությամբ միջազգային հետաքննություն սկսելու Թուրքիայի պահանջի մերժումը, ինչպես նաեւ Իսրայելի պաշտոնական ներողության բացակայությունը խոչընդոտներ են հարաբերությունների կարգավորման ճանապարհին: 2010թ. հուլիսի 5-ին Թուրքիան հայտարարեց Իսրայելի զինվորական ինքնաթիռների համար սեփական օդային տարածքի փակման մասին:

Ամփոփելով կարելի է նշել, որ նախագահ Օբամայի վարչակազմի մերձավորարեւելյան քաղաքականությունը դեռեւս չի կարողացել հասնել իր առջեւ դրված խնդիրների լուծմանը: Բացակայում է որեւէ եական առաջընթաց իսրայելա-պաղեստինյան բանակցային գործընթացում, փաստացի անհաջողության է մատնվել Իրանի հետ երկխոսություն սկսելու Օբամայի նախաձեռնությունը: Գիշտ է, ամերիկյան վարչակազմին հաջողվեց հասնել Ռուսաստանի եւ Չինաստանի կողմից Իրանի հանդեպ նոր պատժամիջոցներ նախատեսող բանաձեռի ընդունմանը, սակայն ակնհայտ է, որ այն համակարգային լուծում չի առաջարկում Իրանի միջուկային ծրագրի առնչությամբ:

Իր հերթին, Իսրայելը հաջողությամբ ընդդիմանում է իսրայելա-պաղեստինյան բանակցային գործընթացում ԱՄՆ-ի կողմից իրականացվող ճնշումներին՝ հստակ ցույց տալով, որ մտադիր չէ զիջումների գնալ իր համար կենսական կարեւորություն ներկայացնող հարցերում:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՆ ԵՎ ՂՐՂՋՍԱՆԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *Սուրեն Սարյան*

Այս տարվա ապրիլին Ղրղզստանում նախագահ Կուրմանբեկ Բաքիեւի տապալմանը հաջորդած իրադարձություններին հետեւեցին հունիսին Օշ քաղաքում կատարված անկարգությունները եւ բախումները, մեծ մասամբ՝ ղրղզ եւ ուզբեկ բնակչության միջեւ (Ղրղզստանի 5,3 մլն բնակչության 70%-ը կազմում են ղրղզները, իսկ 14%-ը՝ ուզբեկները): Ընդ որում, եթե ապրիլին Բիշքեկի դեպքերի ժամանակ զոհվել էր մոտ 100 հոգի, ապա հունիսյան դեպքերի արդյունքում զոհերի թիվը մոտ տասն անգամ ավելի էր:

Ղրղզստանում տարածված է այն վարկածը, որ հենց Բաքիեւի կողմնակիցները հրահրեցին հունիսյան ջարդերը, որպեսզի իրավիճակն անկառավարելի դարձնեն, ինչը թույլ կտար տապալված նախագահին վերադառնալ՝ որպես երկրում կայունության եւ խաղաղության երաշխավոր:

Ժամանակավոր կառավարությանն ի վերջո հաջողվեց կայունացնել իրադրությունն Օշում, ապա անցկացնել սահմանադրական հանրաքվե, որով Ղրղզստանը դառնում է խորհրդարանական հանրապետություն: Իսկ ժամանակավոր կառավարությունը որոշակի լեգիտիմություն ձեռք բերեց, երբ անմիջապես հանրաքվեից հետո այդ կառավարության ղեկավար Ռոզա Օթունբաեւան մեկ ու կես տարի ժամկետով ստանձնեց Ղրղզստանի նախագահի պաշտոնը:

Վերջին զարգացումները փորձագետներին թույլ տվեցին Ղրղզստանը դասել «ձախողված պետությունների» (failed states) շարքին: Ղրղզստանը փաստորեն դարձել է մի պետություն, որն առանց օտարերկրյա օգնության այլևս գոյատևել չի կարող: Նույնիսկ սկսում են խոսել Կենտրոնական Ասիայում «երկրորդ Աֆղանստանի» առաջացման վտանգի մասին: Իսկապես, առաջին հայացքից թվում է, թե Ղրղզստանն անցնում է աֆղանական պետականության փլուզման պատմական ուղին, երբ ազգամիջյան եւ միջկլանային պայքարը հանգեցրեց այդ երկրում պետական իշխանության կազմալուծմանը, ինչն առիթ ծառայեց խորհրդային զորքերի ներխուժման համար՝ հետագա արյունալի պատերազմով եւ ծայրահեղ իսլամական «Թալիբանի» ծնունդով:

Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում իրավիճակի ապակայունացմանը նպաստում են մի շարք գործոններ, որոնց մեջ առանձնանում են տարածաշրջանի երկրների էթնիկ եւ պետական սահմանների անհամապատասխանությունը, ինչպես նաեւ՝ տեղի ժողովուրդների ազգային ինքնագիտակցության տարբեր մակարդակները:

Այսօր էլ տարածաշրջանը հանդիսանում է մեծ տերությունների մրցակցության թատերաբեմ: Ընդ որում, ամերիկյան, ռուսական եւ չինական շահերն այստեղ առավել ցայտուն են բախվում, քան որեւէ այլ տարածաշրջանում: Եվ Ղրղզստանի իրադարձությունները, ներքին պատճառներից զատ, նաեւ արտաքին գործոնների հետեւանք էին:

Ռուսաստանը պատմականորեն դիտում է իրեն որպես Կենտրոնական Ասիայում գերիշխող ուժ եւ, բնականաբար, խանդով է նայում այստեղ Միացյալ Նահանգների ներկայությանը: Հունիսին, Տաշքենդում եղած ժամանակ Ռուսաստանի նախագահ Դ.Մեդվեդեւը հայտարարեց, որ Ղրղզստանում ԱՄՆ-ի կողմից «Մանաս» ավիաբազայի օգտագործումը չի կարող անվերջ տևել:

Պետք է նշել, որ Մոսկվան ոչ հրապարակայնորեն պաշտպանեց Ղրղզստանում կատարված իշխանափոխությունը եւ ճանաչեց Ռ.Օթունբաեւայի գլխավորած ժամանակավոր կառավարությունը: Սակայն Բաքիեւի տապալումը չբերեց Մոսկվայի համար ցանկալի արդյունքի. Օթունբաեւայի կառավարությունը ԱՄՆ-ից դեռեւս չի պահանջել դուրս բերել «Մանաս» ավիաբազան երկրի տարածքից: Նույն կերպ վարվեց ժամանակին Բաքիեւը. նա Մոսկվայից 2 մլրդ դոլարի վարկ վերցրեց՝ փոխարենը խոստանալով դուրս բերել ամերիկյան հենակետը Ղրղզստանից, սակայն ընդամենը բարձրացնելով բազայի համար տրվող տարեկան գումարը՝ 17 մլն դոլարից մինչեւ 60 մլն, շուտով համաձայնության եկավ ամերիկյան կառավարության հետ՝ բազան պահպանելու վերաբերյալ:

Օչի բախումների ժամանակ Օթունբաեւայի կառավարությունը դիմեց Ռուսաստանին՝ ռուսական զորքերը հանրապետություն ուղարկելու խնդրանքով: Սակայն Մոսկվան գերադասեց զերծ մնալ խաղաղարար առաքելություն իրականացնելուց՝ թերեւս գիտակցելով, որ նոր «կայսերական բեռ» ռուսական պետականությունն իր վրա վերցնել չի կարող: Փորձագետների մի մասը նշում է, որ Ռուսաստանը չունի ոչ բավարար զինուժ, ոչ էլ ֆինանսական ռեսուրսներ Ղրղզստանում ռազմական միջամտության համար, եւ շատ հավանական է, որ Մոսկվան հայտնվեր նույն վիճակում, ինչ ԱՄՆ-ը՝ Աֆղանստանում:

Անդրադառնալով տարածաշրջանում Միացյալ Նահանգների դերակատարությանը՝ հարկ է հիշել, որ ԱՄՆ քաղաքագիտական շրջանակներում տարածում ունի «Մեծ Կենտրոնական Ասիա» հասկացությունը, որի մեջ ներառվում են միջինասիական հինգ նախկին խորհրդային հանրապետությունները, ինչպես նաև Աֆղանստանը, Իրանն ու Պակիստանը:

Մեծ Կենտրոնական Ասիայի նախագծով ենթադրվում է նվազեցնել ռուսական եւ չինական ազդեցությունը նախկին հինգ խորհրդային հանրապետությունների վրա՝ դրանք Աֆղանստանի միջոցով կապելով Պակիստանի եւ Հնդկաստանի հետ: Պետք է հաշվի առնել, որ վերջին երեք պետություններն ակտիվորեն մասնակցում են նաև ՇՀԿ աշխատանքներին՝ ձեռք բերելով դիտորդ պետությունների կարգավիճակ եւ սպասելով անդամակցության հարցի լուծմանը:

Հատկանշական է, որ Բարաք Օբամայի վարչակազմն ավելի մեծ կարեւորություն է տալիս «Մեծ Կենտրոնական Ասիա» ծրագրին, քան Բուշի վարչակազմի օրոք ամերիկյան ռազմավարության օրակարգ բերված «Մեծ Մերձավոր Արեւելքի» նախագծին:

Բացի այդ, Աֆղանստանում շարունակվող պատերազմը պահանջում է պահպանել ամերիկյան ռազմական ներկայությունը Կենտրոնական Ասիայի պետություններում: Հարկ է նշել, որ հունիսին նշանակվեց ACPAK-ում (Աֆղանստան–Պակիստան) ՆԱՏՕ զորքերի նոր հրամանատար՝ գեներալ Դևիդ Փեթրեուսը, որն, ի տարբերություն իր նախորդի, չի պաշտպանում Աֆղանստանից եւ ամբողջ Կենտրոնական Ասիայից ամերիկյան զորքերի դուրսբերման գաղափարը:

Տարածաշրջանում ԱՄՆ-ը հատուկ ուշադրություն է դարձնում Ղազախստանի եւ Ուզբեկստանի հետ հարաբերությունների զարգացմանը: Հենց այդ երկու երկրների շնորհիվ 1990-ականներին ԱՄՆ-ին հաջողվեց զսպել տարածաշրջանում Իրանի, Թուրքիայի եւ Պակիստանի ազդեցության ուժեղացման միտումները:

2010թ. ապրիլին Վաշինգտոն կատարած այցի ընթացքում Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաևը ԱՄՆ նախագահ Բ.Օբամայի հետ քննարկել է ամերիկյան օդուժի համար ղազախական տարածքի հնարավոր օգտագործման հարցը:

Աֆղանական պատերազմի սկսվելուց ի վեր ԱՄՆ-ը փորձում էր լուրջ հարաբերություններ հաստատել Ուզբեկստանի հետ: 2005թ. Անդիժանի դեպքերից հետո, երբ այնտեղ տեղի ունեցան բախումներ, նախագահ Քարինոլը որոշակիորեն սառեցրեց ԱՄՆ-ի հետ ունեցած կապերը՝

շրջվելով դեպի Ռուսաստան եւ անդամակցելով ՀԱՊԿ-ին: Այդուհանդերձ, վերջին տարվա ընթացքում վերստին սկսվեց Քարիմովի մերձեցումը Վաշինգտոնի հետ:

Ուզբեկստանը պասիվացրեց իր մասնակցությունը ռուսական նախագծերում՝ Եվրագետում եւ ՀԱՊԿ-ում: Իր հերթին, ԱՄՆ-ը չեղյալ հայտարարեց Անդիժանի դեպքերից հետո Քարիմովի վարչակարգի դեմ հայտարարված պատժամիջոցները եւ վերսկսեց ռազմական համագործակցությունն Ուզբեկստանի հետ:

Հարկ է հիշել, որ դեռեւս 1990-ականներին իր «Մեծ շախմատային տախտակ» գրքում ամերիկյան ռազմավար Ջ.Բժեզինսկին Ուզբեկստանը բնութագրում էր որպես Կենտրոնական Ասիայի առանցքային երկիր՝ հաշվի առնելով, որ այստեղ առկա են առավել խոր պատմական զարգացման եւ ազգային ինքնության գործոնները: Բժեզինսկին նաեւ նշում էր, որ ԱՄՆ նպատակն է թույլ չտալ Կենտրոնական Ասիայում որեւէ այլ տերության գերիշխանությունը, ինչի երաշխիք կարող է ծառայել ուզբեկա-ամերիկյան դաշինքը:

Շատերին զարմացրեց Ուզբեկստանի զուսպ դիրքորոշումը Ղրղզստանի ուզբեկներին օգնություն ցուցաբերելու հարցում: Հատկանշական է, որ Ուզբեկստանը փակեց սահմանը Ղրղզստանի հետ, թեւ նախագահ Իսլամ Քարիմովը կարող էր ուզբեկական բանակին հրաման տալ մտնել Ֆերգանայի հովտի ղրղզական հատված: Հավանական է համարվում, որ նա դրանով խուսափեց լուրջ միջպետական հակամարտության մեջ ներքաշվելուց, ինչպես նաեւ զրկեց Ռուսաստանին ռազմական միջամտության առիթից: Տաշքենդում փորձագիտական մակարդակով լրջորեն խոսվում է, որ ղրղզական իրադարձությունների արդյունքում Ռուսաստանը հետապնդում էր առաջին հերթին Ուզբեկստանի թուլացման նպատակ՝ ներքաշելով նրան հակամարտության մեջ:

Բացի այդ, հարկ է նշել նաեւ, որ Ֆերգանայի հովտում արդեն վաղուց գործում է Իսլամական ազատագրման կուսակցությունը (Հիզբ-ուլ-Թահրիր Իսլամի), որի նպատակն է Քարիմովի վարչակարգի տապալումը եւ Ուզբեկստանում իսլամական պետության հռչակումը: Այդ կուսակցության ակտիվիստներն ապաստան էին ստացել Օշում, եւ հնարավոր է, որ նրանց կհաջողվեր ներթափանցել Ուզբեկստան Օշի ուզբեկ փախստականների հետ խառնվելով:

Ինչ վերաբերում է տարածաշրջանային մյուս ազդեցիկ դերակատարին՝ Չինաստանին, ապա այս խաղում այն չի շտապում բացել իր խաղաթղթերը, թեւ, այսպես թե այնպես, Պեկինը եւս ստիպված է լինելու ակտի-

վացնել իր դերակատարումը տարածաշրջանում, քանի որ հետագա ապակայունացումը կարող է «շոշափել» նաև ՉԺՀ արեւմտյան սահմանները, որտեղ առանց այդ էլ անհանգիստ վիճակ է ստեղծվել՝ ուլողւրական շարժման հետ կապված:

Բացի այդ, Կենտրոնական Ասիայում ստեղծված ցանկացած անկայունություն լուրջ վտանգի տակ է դնում Չինաստանի տարածաշրջանային նախագծերը: Չինական վերլուծաբանները կարծում են, որ անկայունությունը Կենտրոնական Ասիայում կարող է հրահրվել որոշ արեւմտյան երկրների կողմից՝ Չինաստանի խաղաղ զարգացմանն ուղղված սպառնալիքներ ստեղծելու համար: Գաղտնիք չէ, որ Կենտրոնական Ասիան կարելուքով է ՉԺՀ-ի համար՝ որպես հումքային բազա: Տարածաշրջանի երկրների հետ հարաբերություններում Չինաստանի կողմից առաջնահերթություն է տրվում էներգետիկ ծրագրերի իրականացմանը: Արդեն գործում է Թուրքմենստան–Չինաստան գազամուղը, որի հզորությունը ծրագրվում է հասցնել տարեկան 40 մլրդ խորանարդ մետրի:

Փորձագետների գնահատականներով, թուրքմենական գազամուղը շահագործման հանձնելը, ինչպես նաև 2008թ. շահագործման հանձնված՝ Ղազախստանը ՉԺՀ-ին կապող նավթամուղի գործարկումը ազդարարեցին 1990-ականների կեսից տարածաշրջանում Չինաստանի կողմից տարվող ինտենսիվ դիվանագիտության կարելուքագույն նվաճումների մասին: Ներկայումս կառուցվում է նաև Ղազախստան–Չինաստան նոր գազամուղ, ինչպես նաև երկաթուղի:

Հարկ է նշել, որ ղազախական նավթամուղի եւ թուրքմենական գազամուղի շահագործումը խախտեց Կենտրոնական Ասիայում ռուսական «Գազպրոմ» ընկերության ունեցած մենատիրությունը:

Իր հերթին, Չինաստանը տարածաշրջանային պետությունների կողմից դիտվում է որպես խոշոր ներդրող: Այսպես, 2009թ. ընթացքում Չինաստանը գնեց Ղազախստանի նավթագազային ընկերությունների ակտիվների մի մասը՝ դառնալով այդ երկրի վառելիքային համալիրի մոտ 23%-ի սեփականատեր: Վերջերս էլ Ղազախստանի նախագահ Նազարբաևը հայտարարեց, որ Չինաստանի կողմից առաջարկ է ներկայացվել մոտ 1 մլն հեկտար հողատարածք վարձակալելու մասին: Ղազախստանի ղեկավարը նախնական հավանություն է տվել այդ առաջարկին, մինչդեռ այդ երկրի քաղաքական շրջանակներն այն ընկալեցին որպես Չինաստանի կողմից Ղազախստանի դեմ ուղղված տարածքային եւ ժողովրդագրական սպառնալիք: Հարցը շարունակում է մնալ քննարկման փուլում:

Հունիսին Տաշքենդ կատարած այցի ընթացքում ՉԺՀ նախագահ Հու Չինթանն եւ Ուզբեկստանի նախագահ Ի.Քարիմովը համաձայնության եկան Չինաստան ուզբեկական գազի մատակարարումները սկսելու հարցի շուրջ, ինչն էլ ավելի թուլացրեց ռուսական «Գազպրոմի» դիրքերը Կենտրոնական Ասիայում: Բացի այդ, Պեկինը տրամադրելու է 2 մլրդ դոլարի վարկ Ուզբեկստանին՝ գազային ենթակառուցվածքների զարգացման նպատակով:

Ինչ վերաբերում է Ղրղզստանին, ապա այն Պեկինի համար դիտվում է առավելապես որպես տարանցիկ պետություն:

Ի տարբերություն Ռուսաստանի կամ ԱՄՆ-ի, Պեկինն առավելապես կենտրոնացած է տնտեսական նախագծերի իրականացման վրա: Պարզ երեւում է, որ Պեկինն ընտրել է տնտեսական համագործակցության միջոցով քաղաքական ազդեցություն ձեռք բերելու ռազմավարությունը: Իրադարձությունների կայուն զարգացման պարագայում ՉԺՀ-ն հինգ-տասը տարվա ընթացքում կարող է դառնալ Կենտրոնական Ասիայի համար առանցքային արտաքին ուժային կենտրոնը: Ընդ որում, Չինաստանը լրացնում է այն տեղերը, որոնք չի զբաղեցրել Ռուսաստանը: Միեւնույն ժամանակ, Պեկինը խուսափում է տարածաշրջանում Ռուսաստանի հետ շահերի բախման վիճակից:

Խոսելով Կենտրոնական Ասիայում ՉԺՀ դերակատարության մասին՝ չի կարելի չնշել Շանհայի համագործակցության կազմակերպության գործունեության փաստը, որտեղ առավել ծանրակշիռ դեր է վերագրվում հենց Չինաստանին: Պեկինի համար ՇՀԿ-ն առավելապես տարածաշրջանում իրավիճակի կոնսերվացման եւ վերահսկելի փոփոխությունների գործիք է: Այսպես, Չինաստանն, ի տարբերություն Ռուսաստանի, զերծ է մնում ՇՀԿ ընդլայնմանն ուղղված քայլերից՝ համարելով, որ դա միայն կհանգեցնի կազմակերպության գործունեության արդյունավետության նվազմանը, ինչպես նաեւ կնպաստի Կենտրոնական Ասիայում այլ ուժային կենտրոնների, մասնավորապես՝ Հնդկաստանի եւ Իրանի ազդեցության մեծացմանը:

Պետք է նաեւ նշել, որ Չինաստանն առայժմ չունի իրական լծակներ՝ տարածաշրջանում ռազմական եւ քաղաքական իրավիճակի վրա ազդելու համար: Պեկինը շահագրգռված է տարածաշրջանում կայունություն հաստատելու գործում, սակայն ի վիճակի չէ միայնակ անել դա:

Միաժամանակ, Արեւմուտքը շահագրգռված է նպաստելու տարածաշրջանում Ռուսաստանի դերակատարության աճին՝ որպես Չինաստանի հավակնությունների զսպման կարեւորագույն լծակ: Այս դեպքում

Կենտրոնական Ասիան դառնում է այն դաշտը, որտեղ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ «վերաբեռնավորումը» սկսում է աշխատել: Պատահական չէր, որ վերջերս Պետդեպարտամենտի ներկայացուցիչը ոչ պաշտոնապես հայտարարեց, որ հնարավոր է ամերիկյան խաղաղարար զորքերի մուտքը Ղրղզստան, սակայն՝ միայն ռուսական զորքերի հետ միասին: Մյուս կողմից, ԱՄՆ-ի առջեւ խնդիր է դրված թույլ չտալ միայն Ռուսաստանի կամ ՀԱՊԿ-ի հովանու ներքո խաղաղարար զորքերի մուտքը տարածաշրջան:

Ակնհայտ է, որ խնդիրը Ղրղզստանում միայն ժամանակավորապես է չեզոքացվել, եւ հավանական է համարվում ղրղզական պետության փլուզման վտանգը: Հետեւաբար, Կենտրոնական Ասիայի զարգացման հեռանկարները մնում են մշուշոտ, եւ վատթարագույն սցենարները բացառել չի կարելի:

ՊԱՅՔԱՐ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ

Սուրեն Մանուկյան

2010թ. մայիսին Բրազիլիան, Թուրքիան եւ Իրանը Թեհրանում ստորագրեցին հուշագիր՝ իրանական միջուկային ծրագրի հետ կապված խնդիրները խաղաղ ճանապարհով կարգավորելու վերաբերյալ:

Այս համաձայնագրում ամենակարեւորը հենց Բրազիլիայի եւ Թուրքիայի փաստացի մարտահրավերն էր Վաշինգտոնին, որը ոչ միայն չէր արտոնել նման գործողությունները, այլեւ բավական կոշտ կերպով արձագանքեց «ինքնագործունեությանը»: Վերջին շրջանում Թուրքիայի հավակնությունների մասին բավական շատ է խոսվում, այնինչ Բրազիլիայի վերելքը եւ առհասարակ Լատինական Ամերիկայում տեղի ունեցող շեշտակի փոփոխությունները նույնպես ունեն վերլուծության եւ գնահատման կարիք:

21-րդ դարի սկզբին Լատինական Ամերիկայի պետությունների հասարակական կյանքի բոլոր ոլորտները խորքային փոփոխությունների ենթարկվեցին: Տնտեսության մեջ, ներքաղաքական կյանքում, արտաքին քաղաքական ոլորտում տեղի են ունենում այնպիսի զարգացումներ, որոնք փոխակերպում են Լատինական Ամերիկայի ամբողջ պատկերը՝ նոր հեռանկարներ առաջ բերելով եւ միաժամանակ ծնելով նաեւ լրացուցիչ մարտահրավերներ:

Լատինական Ամերիկան հարուստ է նավթի եւ գազի հսկայական պաշարներով, վերականգնվող էներգիայի աղբյուրներով, տիրապետում է խմելու ջրի համաշխարհային պաշարների 13-15%-ին: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը ցույց տվեց լատինամերիկյան տնտեսությունների ուժը, արտաքին հարվածներին դիմագրավելու նրա ունակությունը: Թեեւ 2003–2008թթ. զարգացման աննախադեպ տեմպերը նվազեցին, սակայն տնտեսություններում խուճապահար տրամադրություններ չարձանագրվեցին, ինչպես դա պատահել էր նախկինում:

Բրազիլիայի հավակնությունները

Թեհրանի համաձայնագիրը դարձավ ժամանակակից միջազգային հարաբերություններում Բրազիլիայի հավակնությունների արտացոլումը: Երկու հարյուր միլիոն բնակչությամբ հսկայական երկիրն այլեւս չի բավարարվում տեղական, տարածաշրջանային առաջնորդի դերով եւ

փորձում է իր ազդեցությունը տարածել Լատինական Ամերիկայի սահմաններից դուրս:

Վերջին մեկ ու կես տասնամյակի քաղաքական եւ տնտեսական կայունությունը, ամրապնդված ժողովրդավարությունը եւ քաղաքացիական ինստիտուտների ձեւավորումը, տնտեսական աճի կայուն տեմպերը եւ աղքատության կրճատումն ապահովեցին երկրի արագացված արդիականացումը եւ հնարավոր դարձրին նրա ակտիվ մասնակցությունը միջազգային տնտեսական եւ ֆինանսական համակարգի ժամանակակից ճարտարապետության ձեւավորմանը: Օգտակար հանաժոններով հարուստ Բրազիլիան (երկաթի, ինչպես նաեւ մի շարք այլ հանածոների՝ ցինկ, նիկել, տիտան, նիոբիում, պաշարներով երկիրն առաջինն է աշխարհում) վերջին տարիներին ակտիվորեն ներգրավվում է ածխաջրածինների արդյունահանման ոլորտ, ինչը, հզոր գյուղատնտեսության առկայության հետ մեկտեղ, ապահովում է շարունակական ընթացք դեպի հռչակված՝ 2020թ. աշխարհի հինգերորդ տնտեսություն դառնալու նպատակը:

Բրազիլիան, որն անվանում էին «ննջող հսկա», «արթնացել» է նաեւ աշխարհաքաղաքական առումով: Հատկապես տպավորիչ են երկրի արտաքին քաղաքական ձեռքբերումները Լուիս Ինասիո Լուլա դա Սիլվայի նախագահության շրջանում (2003-2010), որին ԱՄՆ նախագահ Բ.Օբաման անվանեց «աշխարհի ամենահեղինակավոր նախագահը», եւ որի վարկանիշը նախագահության երկրորդ ժամկետի ավարտին աննախադեպ բարձր՝ 80 տոկոս է: Աճող տնտեսական հզորությունը թույլ է տալիս Բրազիլիային մշտապես սեփական, ուրույն կարծիք ունենալ համաշխարհային նշանակության բոլոր հիմնախնդիրներում: Հաճախ այդ կարծիքը, ինչպես, օրինակ, իրանական խնդրի պարագայում, չի համընկնում գերտերությունների դիրքորոշումների հետ: Վերջին տարիներին Բրազիլիան հանդես է գալիս ՄԱԿ քաղաքական եւ տնտեսական կառույցների լայնամասշտաբ բարեփոխումների պահանջով: Խոսքն, առաջին հերթին, ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամների քանակի ավելացման մասին է՝ Բրազիլիան իրեն տեսնում է նոր մշտական անդամներից մեկի դերում: Երկիրն արդեն այսօր մասնակցում է աշխարհի գլոբալ կառավարմանը՝ հիմնականում G20 շրջանակներում:

Նոր եւ բավական լուրջ ներուժ ունեցող նախաձեռնություն է նաեւ BRIC-ը, որը միավորում է արագ զարգացող չորս հսկայի՝ Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան: BRIC-ի անդամ պետություններում ապրում է մարդկության 40%-ը՝ 2,8 մլրդ մարդ:

Բրազիլիան նաեւ մի շարք տարածաշրջանային նախաձեռնությունների հեղինակ է, որոնց նպատակն է միավորել Լատինական Ամերիկան

մեկ միասնական տնտեսական եւ գուցե նաեւ քաղաքական միավորման մեջ՝ Բրազիլիայի ղեկավարությամբ: Սա հստակ հակադրվում է ԱՄՆ թելադրանքի տակ գործող, ամերիկյան բիզնեսի համար ռեսուրսներ եւ մենաշնորհային շուկաներ ապահովող համամայրցամաքային միավորումների գաղափարին: Ստեղծվել է ՄԵՐԿՈՍՈՒՐ-ը, որը սկզբնական շրջանում մեկ տնտեսական օրգանիզմի մեջ միավորեց նախկին մրցակիցներին՝ Բրազիլիային եւ Արգենտինային, հետագայում նաեւ Պարագվային եւ Ուրուգվային՝ ներառելով Հարավային Ամերիկայի տարածքի 60%-ը եւ ՀՆԱ 50%-ը: Մեկ այլ «մաքուր լատինամերիկյան» միավորում է «Ռիոյի խումբը», որը համախմբեց արդեն ամբողջ Լատինական Ամերիկայի երկրները՝ հանդիսանալով տարածաշրջանի երկրների քաղաքական խորհրդակցությունների եւ հավաքական դիվանագիտության յուրօրինակ մեխանիզմ: 2010թ. փետրվարին հայտարարվեց նաեւ Լատինական Ամերիկայի եւ Կարիբյան ավազանի պետությունների միության ստեղծման մասին, որի անդամ են դառնում 32 պետություն:

Բրազիլիայի աճող հեղինակության վկայականն է նաեւ այն, որ հենց այս երկրին է վստահվել անցկացնել 2014թ. ֆուտբոլի աշխարհի առաջնությունը եւ 2016թ. ամառային Օլիմպիական խաղերը:

Ձախ արշավ

Մեկ այլ տպավորիչ միտում է տարածաշրջանի շրջադարձը դեպի ձախ քաղաքական կողմնորոշում: 90-ականների ազատական բարեփոխումները սոցիալական խիստ բեւեռացում առաջացրին, ինչը բերեց բնակչության քաղաքական տրամադրությունների կտրուկ փոփոխության: Մեկը մյուսի հետեւից տարբեր հարավամերիկյան երկրներում իշխանության գլուխ անցան ձախ քաղաքական ուժերի ներկայացուցիչները. Վենեսուելայում՝ Ուգո Չավեսը (1998), Արգենտինայում՝ Նեստոր Բիրշները (2002), Բրազիլիայում՝ Լուլան (2002 եւ 2006), Ուրուգվայում՝ Տաբարե Վասքեսը (2003), Բոլիվիայում՝ Էվո Մորալեսը (2005), Էկվադորում՝ Ռաֆայել Կորրեան (2006), Նիկարագուայում՝ Դանիել Օրթեգան (2006), Հիլիում՝ Միշել Բաչելետը (2006), Կոստա Ռիկայում՝ Օսկար Արիասը (2006): Նրանք բոլորը սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական կամ առնվազն սոցիալական ուղղվածության կուսակցությունների առաջնորդներ են:

Ձախ շրջադարձը երկրների մեծ մասում ուղեկցվում էր սեփական ինքնության կառուցման, վերարժեւորման եւ ընդգծման գործընթացներով: Դրան գունարվում էր տեղաբնիկների քաղաքական ինքնագիտակցության

շեշտակի աճը՝ այսպես կոչված «հնդկացիական վերածնունդը»: Որպես հետեւանք՝ առաջացավ նոր, այլընտրանքային ճանապարհով շարժվելու ձգտումը:

Այս շարժման ամենամեծ ջատագովը Վենեսուելայի խարիզմատիկ առաջնորդ Ուգո Չավեսն է, որը հսկայական նավթային պաշարներից ստացվող եկամուտների հաշվին ոչ միայն իր ազդեցությունն է տարածել հարեւանների, մասնավորապես՝ Կուբայի, Էկվադորի, Բոլիվիայի, Ուրուգվայի եւ Նիկարագուայի վրա, աջակցել հակակառավարական զինված միավորումներին Կոլումբիայում, այլ նաեւ փորձում է ավելի լուրջ դերակատարում ունենալ համաշխարհային քաղաքականության մեջ: Նրա քաղաքական գործընկերների շարքում են այնպիսի երկրներ, ինչպիսիք են Լիբիան, Սիրիան, Ալժիրը, Իրանը եւ Բելառուսը: Վենեսուելայի կարեւորագույն գործընկերը Ռուսաստանն է, որը 2008թ. ընդունեց Չավեսի առաջարկը եւ սեփական տարածքային ջրերից դուրս (Սառը պատերազմի ավարտից հետո առաջին անգամ) Վենեսուելայի հետ համատեղ ռազմածովային զորավարություններ անցկացրեց: Վենեսուելան նաեւ ռուսական զենքի ամենամեծ գնորդներից է, ինչպես նաեւ այն եզակի երկրներից, որը ճանաչել է Աբխազիայի եւ Չարավային Օսիայի անկախությունը:

Ուգո Չավեսի արտաքին քաղաքականությունը եւ ամբողջ հռետորաբանությունը խարսխված են ԱՄՆ-ի դեմ պայքարի գաղափարի վրա: Նույնիսկ Չաիթիում տեղի ունեցած երկրաշարժից հետո, երբ ԱՄՆ-ը որոշեց 16 հազար զինվորական տեղափոխել այդ երկիր՝ մարդասիրական օգնություն ցույց տալու եւ կարգ ու կանոնը պահպանելու համար, դա Չավեսի կողմից որակվեց իբրեւ Չաիթին օկուպացնելու ԱՄՆ ծրագիր: Մնալով ԱՄՆ նավթի ամենամեծ մատակարարը՝ Չավեսը միաժամանակ ձգտում է նվազեցնել եւ հնարավորության դեպքում բացառել Վաշինգտոնի ներգրավվածությունը Լատինական Ամերիկայի գործերին: Այս խնդիրը, սակայն, չափազանց դժվարիւրագործելի է՝ հաշվի առնելով տարածաշրջանում ԱՄՆ ներկայության ավանդույթները:

Մոնրոյի դոկտրինի սասանումը

ԱՄՆ-ն իր հատուկ շահերը Արեւմտյան կիսագնդում հռչակեց դեռ 1823թ., երբ նախագահ Մոնրոյի անունը կրող դոկտրինը հայտարարեց «Ամերիկան՝ ամերիկացիների համար» սկզբունքը եւ հորդորեց եվրոպական տերություններին զերծ մնալ Չարավային Ամերիկայում սեփական ազդեցության տարածման եւ գաղութացման փորձերից:

Սկսվեց մայրցամաքում ԱՄՆ գերիշխանության մի դարաշրջան, երբ ոչ մի նշանակալի զարգացում տեղի չէր ունենում առանց ԱՄՆ իմացության եւ թույլտվության: Վաշինգտոնը խառնվում էր նույնիսկ լատինամերիկյան պետությունների ներքին գործերին՝ իրեն առավել հարմար վարչակարգեր իշխանության բերելով:

Միակ պետությունը, որը կարողացավ դիմագրավել այս ճնշմանը, Կուբան էր, որը մինչեւ այսօր հակաիմպերիալիստական պայքարի խորհրդանիշ է շատերի համար: Սառը պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ը, զբաղված լինելով այլ տարածաշրջաններում սեփական ազդեցությունը տարածելով, որոշ չափով ուշադրությունից դուրս թողեց Հարավային Ամերիկյան, վստահ լինելով սեփական դիրքերի ամրության վրա: Նույնիսկ Վենեսուելայում «անցանկալի» վարչակարգի հայտնվելը մեծ հաշվով չանհանգստացրեց նրան. Վաշինգտոնն ընտրեց Չավեսին մեկուսացնելու, նրա դեմ ընդդիմության ելույթներ հրահրելու քաղաքականությունը: Վաշինգտոնը չսթափվեց նույնիսկ, երբ 2003թ. Չիլին եւ Մեքսիկյան հրաժարվեցին աջակցել ՄԱԿ ԱԽ-ում ԱՄՆ դիրքորոշմանն Իրաքի հարցում:

Արդյունքում՝ տարածաշրջանը կարծես դուրս է գալիս ԱՄՆ վերահսկողությունից: Իրավիճակը փրկելու փորձերն ավելի են վատթարացնում դրությունը: Կոլումբիայի հետ «Պաշտպանության եւ անվտանգության ոլորտում համագործակցության եւ տեխնիկական աջակցության մասին» պայմանագիրը, որը թույլ տվեց այս երկրում առնվազն 7 ռազմաբազա տեղակայել, վատ ընդունվեց մայրցամաքի այլ պետությունների կողմից: Մորալեսը դա համարեց «հայրենիքի դավաճանություն»:

2009թ. Հոնդուրասում տեղի ունեցած հեղաշրջման կազմակերպումը նույնպես վերագրում են ԱՄՆ-ին: Թեեւ նախագահ Օբաման խիստ քննադատեց կատարվածը՝ անվանելով այն ապօրինի գործողություն, որը կարող է «սարսափելի նախադեպ» դառնալ տարածաշրջանի համար, սակայն պաշտոնանկ արված նախկին նախագահ Մանուել Սելայայի սերտ բարեկամական կապերը Ուգո Չավեսի հետ, ինչպես նաեւ ԱՄՆ բացահայտ աջակցությունը նորընտիր նախագահին կասկածները շատ հիմնավոր են դարձնում:

Այսպիսով, ԱՄՆ ազդեցությունը Հարավային Ամերիկայի նկատմամբ ավելի խնդրահարույց է դառնում: Հակառակ դրան, ավելանում է լատինամերիկյան համայնքի ազդեցությունը ԱՄՆ-ում: 21-րդ դարի սկզբին իսպանախոս ամերիկացիները, գերազանցելով սեւամորթ ամերիկացիներին, դարձել են ԱՄՆ ամենամեծ փոքրամասնությունը: Այս համայնքի քաղաքական ազդեցությունը (հատկապես մեքսիկական ծագում ունեցող)

զգալիորեն մեծացել է: Դեպի ԱՄՆ չավարտվող արտահոսքն աստիճանաբար ուժեղացնում է արդեն ձեւավորված լատինամերիկյան լոբբին, որը հիմնականում ներքաղաքական խնդիրների լուծմանը միտված գործիքից ձեւափոխվում է արտաքին քաղաքական որոշումների վրա ազդեցության լծակի:

Մեկ այլ ազդեցության գործոն է թմրաբիզնեսի եւ թմրանյութերի շրջանառության աճը: ԱՄՆ-ը թմրանյութերի աշխարհի ամենամեծ սպառողն է, իսկ Կոլումբիան, Պերուն, Բոլիվիան եւ Մեքսիկան՝ խոշորագույն մատակարարներ: Թեեւ թմրաբիզնեսի դեմ պայքարը հայտարարվել է ԱՄՆ-ում «ամերիկյան ազգի ապագայի հետ» անմիջականորեն կապված ազգային անվտանգության առաջնային խնդիրներից մեկը, այն էական արդյունք չի տալիս:

Այս պայմաններում արձանագրվում է նոր դերակատարների (Եվրամիություն, Չինաստան եւ այլն) աճող հետաքրքրությունը, որոնք փորձում են շահավետ ներդրումային հնարավորություններ ստեղծել իրենց համար եւ աշխարհաքաղաքական առավելություն ստանալ ԱՄՆ հարեւանությամբ:

Եվրամիությունը, հիմնականում ոչ ֆորմալ կերպով, գործում է Իսպանիայի եւ որոշ չափով Պորտուգալիայի միջոցով՝ փորձելով շահարկել էթնոլեզվական ընդհանրությունները եւ ընդհանուր պատմական անցյալը:

Չինաստանը չափազանց հետաքրքրված է տարածաշրջանի օգտակար հանածոներով եւ առեւտրական հարաբերությունների զարգացմամբ: 2009թ. այն դարձավ Բրազիլիայի գլխավոր առեւտրական գործընկերը՝ առաջ անցնելով ԱՄՆ-ից:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

| | |
|---|----|
| Գազիկ Տեր-Հարությունյան ԼՂՀ ԵՎ ՏԱՐԱԾ ԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ | 1 |
| Ռուբեն Մելքոնյան ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ | 7 |
| Վահրամ Հովյան ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ | 11 |
| Արաքս Փաշայան ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ | 15 |
| Հայկ Գաբրիելյան ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՍՐԱՑՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ | 19 |
| Սեւակ Սարուխանյան ԻՐԱՆԸ ԵՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ | 26 |
| Բենիամին Պողոսյան ԱՄՆ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԸ | 30 |
| Սուրեն Սարյան ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՆ ԵՎ ՂՐԴՋՍՏԱՆԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 36 |
| Սուրեն Մանուկյան ՊԱՅՔԱՐ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ | 43 |

*Շապիկին պատկերված է
Երզնկայի ջրվեժը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երևան, 375010, Սելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՍՄ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: